ISSN 1829-2003

ՎԱՐԴԱՎԱՌ

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՍՈՒՆԱՍԻՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

RESEARCH ON ARMENIAN ARCHITECTURE

DUTY OF SOUL

N 7 ՀՈՒԼԻՍ - ՍԵՊՏԵՄԲԵՐ JULY - SEPTEMBER 2012

Սամվել Ալիխանյան, Գագիկ Սարգսյան
ԴԱՊԻ ՎԱՆՔՈՒՄ 2008 Թ. ԿԱՏԱՐՎԱԾ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

էջ 1

Սամվել Կարապետյան
ՆՈՐ ՏՎՅԱԼՆԵՐ ԽԱԹՐԱՎԱՆՔԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

էջ 13

Րաֆֆի Քոռթոշյան
910 Թ. ՆՈՐԱՀԱՅՏ ԽԱՉՔԱՐԻ ԲԵԿՈՐ ԽՈՏԱԿԵՐԱՑ ՎԱՆՔԻՑ

էջ 21

Սամվել Կարապետյան
ԱԳՈՒԼԻՍԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՂԵՌՆԸ

էջ 22

Րաֆֆի Քոռթոշյան
ՄՈՌԱՑՎԱԾ ԽՆԵ

էջ 28

Սամվել Կարապետյան
ՄՐԵՆԸ ԵՎ ՆՐԱ ՅՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

էջ 31

ՎԱՐՁ
DUTY OF SOUL

N 7 ՅՈՒԼԻՍ - ՍԵՊՏԵՄԲԵՐ 2012
JULY - SEPTEMBER 2012

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ
ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Editor-in-chief
SAMVEL KARAPETIAN

ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄ
ԷՄՄԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
ԽՄԲԱԳԻՐ Editor
EMMA ABRAHAMIAN

ՀԱՍՄԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ԽՄԲԱԳԻՐ-ՍՐԲԱԳՐԻՉ
Proof-reader (Armenian text)
HASMIK HOVHANNISSIAN

ԳԱՅԱՆԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ
ԹԱՐԳՄԱՆԻՉ Translator
GAYANE MOVSISSIAN

ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՋԵՎԱՎՈՐՈՂ
Designer
ARMEN GEVORGIAN

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ
RESEARCH ON ARMENIAN ARCHITECTURE FOUNDATION
Engaged in informational Activity

ՎԿԱՅԱԿԱՆ N 03Ա089223
ՏՐՎԱԾ 13.10.2010
Certificate No. 03Ա089223
Given 13.10.2010

ՀԱՄԱՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ
ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Responsible for this issue
SAMVEL KARAPETIAN

ՏՊԱԳՐՎԵԼ Է
«ԲՅՈՒՐԱԿՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉԱՏԱՆԸ
Printed by
BYURAKN Publishing House

ՏՊԱՔԱՆԱԿԸ՝ **1000**
Number of copies: **1000**

ԵՐԵՎԱՆ, ԲԱՂՐԱՄՅԱՆ 24Գ
Baghramian 24g, Yerevan, RA

http://www.armenianarchitecture.am
http://www.raa.am
raayer@sci.am
010 52 15 25

© ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ
© Research on Armenian Architecture

910 Թ. ՆՈՐԱՀԱՅՏ ԽԱՉՔԱՐԻ ԲԵԿՈՐ ԽՈՏԱԿԵՐԱՑ ՎԱՆՔԻՑ

Րաֆֆի Քորթոշյան

2010 թ. Վայոց Ձորի մարզի Խաչիկ գյուղի մոտ գտնվող Խոտակերաց կամ Քարկոփի վանքում ընթանում էին վերականգնման աշխատանքներ: Վանքն ամբողջությամբ վերածվել էր շինհրապարակի: Ցավալի էր տեսնել, որ այդտեղ անխնամ կերպով թափված էին ինչպես ճարտարապետական, այնպես էլ գերեզմանական բնույթի տարբեր բեկորներ: Դրանց մեջ ուշագրավ էր փորագիր, երկտող, հստակ ընթեռնելի արձանագրությամբ թվակիր խաչքարի մի բեկոր (պահպանվել է ստորին հատվածը).

Թի(ւ)ս ՅԾ/Թ:

910 թ. սույն խաչքարի բեկորը փաստորեն Հայաստանի Հանրապետության տարածքում մեզ հայտնի ստույգ թվագրում ունեցող հնագույն խաչքարերից մեկն է և գիտական շրջանակներին ցարդ հայտնի Հորթուն գյուղատեղիում գտնվող (Արարատի մարզ) ամենահին խաչքարից[1] «երիտասարդ» է ընդամենը 34 տարով:

Ի դեպ, խաչքարի բեկորը հասակակից է վանքի ամենահին կառույցին՝ Սբ. Աստվածածին եկեղեցուն[2]:



1 **Կարապետյան Ս.**, Ամենահին թվագրությամբ նորահայտ խաչքարը, «Արարատ» (շրջանային թերթ), 1986, № 151, 20 դեկտեմբեր, էջ 3: Տե՛ս նաև նույնի՝ Ամենահին թվագրությամբ նորահայտ խաչքարը, «Էջմիածին», 1987, Ե-Զ, էջ 80-81:

2 Խոտակերաց վանքի Սբ. Աստվածածին եկեղեցին 910 թ. կառուցել է Սյունյաց իշխանուհի Շուշանն ամուսնու՝ Սյունյաց Աշոտ իշխանի կառուցած և 800-ական թթ. վերջերին տեղի ունեցած ուժեղ երկրաշարժից քանդված եկեղեցու տեղում (**Մտեփաննոս Օրբելյան**, Սյունիքի պատմություն, Երևան, 1986, էջ 214-216):

ԱԳՈՒԼԻՍԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՂԵՌՆԸ

Սամվել Կարապետյան

1988 թ.-ից ի վեր, երբ տեղի ունեցավ Նախիջևանի Ինքնավար Հանրապետության տարածքի բնիկների բռնագաղթը, և երկրամասը փակվեց իրենց հայրենիքից վտարված հայազգի քաղաքացիների համար, գրեթե անհնարին դարձավ տարածքում գտնվող հայկական պատմական հուշարձանների վիճակի մասին տեղեկությունների հայթայթումը:

Անշուշտ, պետական մակարդակով օրնիբուն հայատյացություն քարոզող աղրբեջանական իշխանությունների կեցվածքը և դեռևս «խաղաղ» տարիներին հայկական պատմական հուշարձանների, հատկապես քրիստոնեական շերտի նկատմամբ իրականացված բազմաթիվ ոտնձգությունները վատ կանխազգացումների հիմք էին տալիս, սակայն, այնուամենայնիվ, շուրջ տասը տարի՝ մինչև 1998 թ., երկրամասի պատմական հուշարձանների մասին հավաստի որևէ տեղեկատվություն ձեռք բերել այդպես էլ հնարավոր չեղավ:

Վանդալական գործողությունների մասին հանրությունն առաջին անգամ իրազեկվեց միայն 1998 թ., երբ Արաքսի իրանական ափից լուսանկարներով վավերացվեցին Հին Ջուղայի միջնադարյան գերեզմանոցի՝ բուլդոզերներով ավերման պահերը:

Հակառակ մինչև ՅՈՒՆԵՍԿՕ բարձրացված ահազանգին և բողոքներին՝ ջարդարարությունը շարունակվեց, և արդեն 2003 թ. կատարված լուսանկարները պարզեցին, որ հնավայրի բազմահազար կանգուն բոլոր խաչքարերն էլ տապալված էին:

2005 թ. ամռանը, երբ նախորդ տարիներին ստացած մի քանի մերժումներից հետո ի վերջո մեծ դժվարությամբ Նախիջևան կարողացավ մուտք գործել շոտլանդացի հետազոտող Սթիվեն Սիմը, բացահայտվեց, որ վանդալական գործողությունները բնավ էլ չեն սահմանափակվել սոսկ Ջուղայի գերեզմանոցով, այլ դրանք կրել են համատարած բնույթ: Համենայն դեպս, հազիվ երեք օր աշխատելու հնարավորություն ունեցած Ս. Սիմը (նախիջևանյան իշխանությունները երրորդ օրը նրան ձերբակալում և վտարում են երկրամասի տարածքից) իր այցելած հնավայրերում այլևս պատմական որևէ հուշարձան չէր գտել:

Նա, ի լուր աշխարհի, գուժեց Աբրակունիսի Սբ. Կարապետի մեծահռչակ վանքի և Շոռոթ գյուղի եկեղեցու՝ հիմնահատակ ոչնչացման լուրը:

Հաշված ամիսներ անց՝ նույն թվականի դեկտեմբերին, Արաքս գետի իրանական ափից փաստագրվեցին ծանր մուրճերով զինված աղրբեջանական բանակի աննախադեպ վանդալական գործողությունները, որի արդյունքում Ջուղայի գերեզմանոցի՝ արդեն տապալված բազմահազար խաչքարերն ու տապանաքարերը վերածվեցին խճազանգվածի, և հաշված օրերի ընթացքում Երկրի երեսից մեկընդմիշտ ջնջվեց աշխարհահռչակ հնավայրը:

Եղերական այս դեպքից հետո հաստատվեց, որ փաստորեն քաղաքակրթության և համայն մարդկության դեմ կատարվել է ողջ երկրամասը ներառած պետական մակարդակով ծրագրված հանցագործություն: Ընդ որում, հակառակ բազում ուրացումների, կեղծավոր, ստահոդ և խուսափողական տեղեկատվությունների, այսօր արդեն առկա են անժխտելի իրողության ցավալի ապացույցները: Խոսքը վերաբերում է 2011 թ. հուլիսի 17-ին տիեզերքից կատարված լուսանկարի միջոցով ձեռք բերված նոր տվյալներին, որոնցից մասնավորապես պարզվում է, որ այլևս գոյություն չունեն ոչ միայն արդեն ահազանգված Ջուղայի գերեզմանոցը, Նախիջևան քաղաքի և մերձակա Ալիապատ գյուղի եկեղեցիները, Աբրակունիսի վանքը[1], այլև Վերին և Ներքին Ագուլիսների միջնադարյան ութ վանք-եկեղեցիները և հազարավոր տապանաքարեր պարունակող մի քանի գերեզմանոցները:

Ստորև համադրաբար ներկայացնում ենք բոլոր ութ հուշարձանների (1 վանք, 7 եկեղեցի)՝ արդեն երբեմնի գոյությունը փաստող տվյալները և ակամա վերհիշելով Վիկտոր Հյուգոյի մարգարեական խոսքերը («Ամեն կողմ ավեր ու սուգ, թուրքերն են անցել այստեղից»)՝ ցանկանում ենք շեշտել, որ, ի տարբերություն Եվրոպայի, Հայոց Հայրենիք ներթափանցած թուրքերը դեռ չեն «անցել այստեղից», նրանք ներկա են, նրանք «ապրում և գործում են» մինչև հիմա «ապրած» նախորդ դարերի նման...

1 Թվարկված հուշարձանների ոչնչացման վերաբերյալ մանրամասները տե՛ս ամբողջությամբ այս խնդրին նվիրված «Վարդք» հանդեսի 2011 թ. № 3-ում:



Վերին և Ներքին Ագուլիս գյուղերի և հարակից տարածքի հանույթն ըստ ԽՍՀՄ զինվորական գլխավոր շտաբի 1:50.000 մասշտաբի քարտեզի (1977 թ.) և 2011 թ. հուլիսի 17-ին տիեզերքից կատարված լուսանկարի (լուս.՝ Google Earth)

Ներքին Ագուլիսի Ամառային կամ Սբ. Նշան և Սբ. Ստեփանոս կամ Սբ. Երրորդություն եկեղեցիներ





Վերին Ագուլիսի Սբ. Հովհաննես-Մկրտիչ եկեղեցի



Վերին Ագուլիսի Սբ. Հակոբ-Հայրապետ եկեղեցի



Վերին Ագուլիսի Սբ. Շմավոն եկեղեցի





Վերին Ագուլիսի Սբ. Աստվածածնի Մեծ անապատ վանք



Վերին Ագուլիսի Սբ. Քրիստափոր եկեղեցի



Վերին Ագուլիսի Սբ. Թովմա վանք

Վերին Ագուլիսի Սբ. Ստեփանոս եկեղեցի



ՄՈՌԱՑՎԱԾ ԽՆԵ

Րաֆֆի Քորքոշյան

Խնե[1] գյուղը գտնվում է Սիրիայի Ճըսըր-Շղուր գավառի հյուսիսում՝ Եագուպիե գյուղից արևելք՝ մի բլրակի վրա՝ Շեյխ Իսա անվամբ հայտնի հանքային ջերմուկի մոտ:

Գյուղն ունի բազմաթիվ աղբյուրներ և շրջապատված է պարտեզներով, ձիթենու և թզենու այգիներով[2]:

Գյուղանվան մեզ հայտնի առաջին հիշատակությունը Հալեպի գանձատանը պահվող սաղավարտն է՝ 1804 թ. հայերեն ելևդագիր երկտող արձանագրությամբ.

Նոր(ո)գ(ե)ցի սաղ(ա)վ(ա)րդս ձեռամբ տ(է)ր Յոհաննէս գահանային և տրամբ իւր կողակցուն | և տրամբ Իտլիպու եղեալ ժողովրդոցն ի դռան Ս(ուր)բ Կիպրիանոսի Խնէ գուղին եկեղեց(ու)ն, ՌՄԾԳ (1804):

Հրատ. առաջին անգամ:

Խնե գյուղի տեսքը տիեզերքից (լուս.՝ Google Earth, 2010 թ.). կարմիր օղակով մատնանշված է ավերված Սբ. Կիպրիանոս եկեղեցու տեղը

Հայտնի է, որ հայր Սահակ Քեշիշյանը գյուղի մոտ ընդօրինակել է 1818 և 1856 թթ. վերաբերող հայերեն երկու արձանագրություն[3]:

1852 թ. գյուղի համար Սսում քահանա է ձեռնադրվում խնեցի Պետրոս Մովսեսյանը[4]:

Լատին քարոզչությունը գյուղ մուտք է գործում 1870-ական թվականներին՝ Մեսրոպ Նազլյանի[5] քահանայագործության ժամանակ, գյուղի երկու մեծ ընտանիքների՝ Ջոուբի և Հաննեի միջև ծագած վեճերի պատճառով:

1871 թ. Մարկոս քահանա Տեր-Գասպարյանն ուղարկվում է գյուղ՝ տեղում քննելու աթոռապատկան ձիթաստանի հաշիվները և տեղի Մեսրոպ քահանայի լատինամետ գործունեության հետևանքները: Նրան հաջողվում է լատինադավանությունից ետ պահել գյուղացիների մի մասին[6]: Սակայն, հակառակ դրան, 1876 թ. գյուղի բնակչության մեծ մասը լատինադավանություն է ընդունում[7]:

1878 թ. գյուղում հիմնվում է լատին վանական կենտրոն՝ արական և իգական դպրոցներով, արհեստագործական վարժարանով, առողջապահական կենտրոնով և եկեղեցով, իսկ 1884 թ.՝ լատինական երկրորդ եկեղեցին[8]:

Տեսարան Խնե գյուղի աթոռապատկան ձիթապտղի այգիներից (ձիթաստանը)

1878 թ. Հալեպի գավառական ժողովներից մեկի ժամանակ վերստին քննարկվում է Մեսրոպ քահա-

---

1 Ներկայումս պաշտոնապես կոչվում է Ղնեյյե (غنية): Հայտնի է որպես լատինացած հայերի գյուղ:

2 **Տէր-Ղազարեան Յ.**, Հայկական Կիլիկիա. տեղագրութիւն, Անթիլիաս, 1966, էջ 216-217:

3 Նշվ. աշխ., էջ 217:

4 **Միւրմէեան Ա.**, Պատմութիւն Հալէպի Հայոց, հ. 3, Փարիզ, 1950, էջ 811-812:

5 Մեսրոպ քահանան ծնվել է 1829 թ. Կարինում: Մինչև կյանքի վերջը՝ 1916 թ., գյուղի լատին եկեղեցում կատարել է հայերեն ժամերգություն (**Չոլաքեան Յ.**, Անտիոքի մերձակայ Ռուճի հովիտի հայերը, Անթիլիաս, 2006, էջ 126, 136):

6 **Միւրմէեան Ա.**, նշվ. աշխ., էջ 833:

7 «Արեւելեան մամուլ», 1906, № 49, էջ 1199-1202:

8 **Ազէզեան Հ.**, Հայերու տեղաբաշխումը Սուրիոյ մէջ, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2008, № 3, էջ 79:

Հալեպի գանձատանը պահվող 1804 թ. սաղավարտը (լուս.՝ Ռ. Քորթոշյանի, 2008 թ.)

նայի՝ լատինամետ քարոզչություն ծավալելու հարցը, քանի որ նրա հետ լատինացել էր 30-40 հայ ընտանիք: Նշյալից զատ՝ տեր Մեսրոպը սեփականացրել էր աթոռապատկան ձիթաստանը[9] և մերժում էր հաշվետվություն ներկայացնել[10]:

Ինչպես երևում է 1888 թ. մի տեղեկությունից, բարձրաստիճան հոգևորականներն իրենք ևս իրենց շահամոլ գործելակերպով նպաստում էին առաքելադավան հոտի հուսալքությանն ու լատինացմանը. «Եաղուպեայի գիւղին Տ. Գրիգոր քահանայէն 25 ոսկի կը պահանջուի, բայց յիշեալը պարտք չունի եղեր, այդչափ դրամ չունի եղեր, որու հոգ. եթէ անկարող է, ինչու քահանայ եղաւ, թէ ոչ Լատին եղող Տ. Մեսրոպ քահանային մօտ թող երթայ: Արամոյ գիւղին Տ. Մատթէոս քահանայէն ուխտագիր և կամ ոսկի կը պահանջուի, եթէ ոչ փիլոն առնելու իրաւունքէն զրկելու է, իբր թէ գանգատագրեր հասեր են եղել»[11]:

1899 թ. Օ. Մազլումյանը գրում է. «Ղընիահի բնակիչներուն 3/4ը իր երկու քահանաներով (տէր Մեսրոպ և տէր Կարապետ) լատինացած են շնորհիւ ապունա Էմին հռչակուած Ֆրանչիսկեանին թափած կարմրուկ ոսկիներուն և անդուլ ջանքերուն: Այս ապունան, քանի մը հայ տուն որսալու համար, հրաժարած է Հալէպի Մեծաւորութենէն՝ կը բնակի Ղընիա, ուր շինած է մեծ ծախքով փառաւոր վանք մը, յարակից եկեղեցի մը ու դպրոց մը, ձրիաբար կը դաստիարակէ գիւղացիներուն լատին և ոչ լատին մանուկները, և յամառութեամբ մնացածներուն զաւակները կը պատրաստէ լատինութեան: Գալով Լուսաւորչական Հայերուն (եթէ ներելի է այդ անունը տալ) ունին մի եկեղեցի Ս. Կիպրիանոս անունով. դպրոց՝ մի փնտրռէք. քահանայ ալ չունին. կիրակիէ կիրակի Եագուպիյէէն քահանայ մը գալով կը պատարագէ Հայերէն լեզուով. լեզու մը զոր ինքն ալ չի հասկնար: Այս գիւղի եկեղեցիին մէջ պատարագեց քաղաքիս Առաջնորդական տեղապահ Ներկարարեան հայր օգոս. 8ին, որ մեզի հետ շրջագայութեան ելած էր այս կողմի գիւղերը...»[12]:

1906 թ. գյուղն ուներ 131 տուն բնակիչ, որից 5-ը՝ հայ առաքելական (քահանան էր տեր Կարապետ Փափազյանը), իսկ 126-ը՝ հայ լատինադավան: Լատին հայերի հոգևոր հայրն էր 80-ամյա տեր Մեսրոպ քահանան[13]:

Սբ. Կիպրիանոս[14] եկեղեցին գտնվում էր գյուղի կենտրոնում՝ լատինական վանքի արևելյան կողմում:

1902-1905 թթ. լատինադավան հայերը քանիցս խլում են եկեղեցու բանալին, սակայն տեղի կառավարության միջամտությամբ ստիպված վերադարձնում են այն Կարապետ քահանային: Չկարողանալով սեփականացնել եկեղեցին՝ 1905 թ. գիշերով քանդում են եկեղեցու տանիքը[15]:

1906 թ. օգոստոսին Բերիո թեմի ժողովներից մեկում քննարկվում է եկեղեցու տանիքը նորոգելու հարցը: Որոշվում է նորոգման թույլտվությունը ստանալ Ճըսըր-Շղուրի գայմագամին կաշառելու միջոցով, որը պիտի իրականացնեին խնեցիներ Իբրահիմ Ասիսը և Իբրահիմ Մուսային[16]: Ստանալով

9 Մեսրոպ քահանայի սերունդներն այժմ էլ բնակվում են գյուղում:

10 **Միւրմէեան Ա.**, նշվ. աշխ., էջ 856:

11 «Արձագանք», Թիֆլիս, 1888, № 6, էջ 73:

12 **Մազլումեան Օ.**, Մոռացուած անկիւնները Ղընիա և Եագուպիյէ, «Բիւրակն» 1899, էջ 635:

13 «Արեւէլեան մամուլ», 1906, № 49, էջ 1201-1202:

14 Եկեղեցու հիմքերը 2007 թ. գյուղացիները ծածկել են հողով (տեղեկությունը 2011 թ. մեզ է փոխանցել Ավետիս Օհանյանը):

15 «Արեւէլեան մամուլ», 1906, № 49, էջ 1200, 1202:

16 ՀԱԴ, ֆ. 1421, ց. 5, գ. 4, թ. 3:



Խնե գյուղի լատին եկեղեցու տեսքը

հրամանագիրը՝ նույն թվականի սեպտեմբերի 6-ին տեր Արսեն Հարությունյանը ժամանում է Խնե և կազմում 5600 ղուրուշ ծախս պահանջող նախահաշիվը: Սակայն գյուղապետն ընդդիմանում է նախաձեռնությանը՝ ասելով. «...գեղի մեծամասնութիւնը լատինացած է... եկեղեցին ալ մեծամասնութեան կը պատկանի... մնացեալ 5 տուն հայերը իրաւունք չունին եկեղեցիին տիրանալու...»[17]:

1906 թ. հոկտեմբերի 6-ին առաքելադավան հայերն իրեն իրավունքները վերականգնելու նպատակով դատ են հարուցում, սակայն դա էլ ավարտվում է ի նպաստ լատինների, քանի որ դատարանը Թերա Սանթա առաքելության հայրերի և Հալեպի Իտալիայի հյուպատոսի ճնշման տակ մերժում է Խնե գյուղի առաքելական հայ համայնքի բոլոր իրավունքները և հարցը համարում փակված[18]:

Այս ձախողումից հետո վախի մթնոլորտ է տիրում Խնե և Եագուպիե գյուղերի առաքելադավան հայերի շրջանում. «...դղրդալի ահին պտուղը բացի Գնիոյ հայ ժողովրդեան, մինչև իսկ Եագուպիոյ ժողովրդեան ևս ազդած էր. այնպէս որ գիւղէն լուր էին ղրկել, թէ ալ ևս տ. Կարապետը մեր գիւղը ոտք չկոխէ, մենք այժմս կը վախնանք. կամ Ճիսիր թող նստի մինչև յաջողութիւն մը գտնէ և կամ Հալէպ թող երթայ...»[19]:

Հայտնի է, որ 1907 թ. գյուղն ուներ 5 տուն հայ առաքելական բնակիչ[20], որոնց հոգևոր հովիվը՝ Կարապետ քահանա Փափազյանը, գտնվում էր Հալեպում[21]: Նա վերադառնում է միայն 1909 թ. դեկտեմբերին[22], երբ գյուղն արդեն ամբողջովին լատինացած էր, իսկ ֆրանչիսկյանների կողմից կառուցված լատինական դպրոցում իսպառ դադարել էր հայերենի ուսուցումը[23]:

1960-ական թթ. Խնեն ուներ 100 տուն ծագումով հայ, արաբախոս լատինադավան բնակչություն[24]:

2011 թ.[25] գյուղում բնակվում էին 70 տուն արաբախոս լատինադավան հայեր: Նրանք, քաջատեղյակ իրենց հայկական արմատներին, այնուամենայնիվ, չունեին ազգային գիտակցություն, որին փոխարինել էր կրոնականը:

Ինքնաբերաբար հարց է ծագում, թե ո՞վ է գյուղի լատինացման մեղավորը՝ Սկրտիչ կաթողիկոսի կամ տեր Մեսրոպի շահամոլությու՞նը, գյուղացիների խեղճությու՞նը, թե՞ կարմրուկ ոսկիների սերը: Բայց մենք կարծում ենք, որ մեղավորը մեր անտարբերությունն է: Այն անտարբերությունը, որի պատճառով հայերենը դադարել էր մի գյուղում, որտեղ մինչև ԺԹ դարի կեսերը ոչ միայն խոսում էին հայերեն, այլ նաև գրում: Լեզուն է մեր վահանը, ռազմի դաշտում առանց վահանի անհնար է գոյատևել:

Բայց դեռ ուշ չէ: Քանի դեռ այդ մարդկանց մեջ առկա է հիշողությունը, պետք է փորձել զարկ տալ ազգայինին և ոչ թե կրոնականին: Հայը հայ է՝ լատին, թե առաքելական: Այսպես պետք է մոտենանք հարցին: Ի վերջո նորից պետք է վերականգնել 1908 թ. դադարած հայոց լեզվի ուսուցումը Խնե գյուղում: Սա կոչ է ՀՀ սփյուռքի նախարարությանը, որն իր ձեռքին պետք է կրի հայ պետականության փարոսը՝ իր մոտ կանչելով մոլորված զավակներին:

Սա նաև կոչ է Բերիո թեմի հայ առաքելական և կաթողիկե առաջնորդարաններին: Կաթողիկե առաջնորդարանն ունեցել է նման նախադեպ, երբ 1946 թ. Քեսաբի հայախոս լատին համայնքը լուծվեց հայ կաթողիկե համայնքի մեջ:

Ի վերջո սա նաև կոչ է Խնե գյուղի լատին հայերին՝ վերադառնալու իրենց և իրենց նախնիների ազգային ինքնությանը:

---

17 «Արեւէլեան մամուլ», 1906, № 49, էջ 1199-1200:
18 **Չոլաքեան Յ.**, նշվ. աշխ., էջ 141-142:
19 Նշվ. աշխ., էջ 142:
20 «Արարատ», 1907, էջ 142:
21 ՀԱԴ, ֆ. 1421, ց. 5, գ. 6, թ. 5:
22 ՀԱԴ, ֆ. 1421, ց. 5, գ. 24, թ. 3-4:
23 **Սիրմէեան Ա.**, նշվ. աշխ., էջ 895-896:
24 **Տէր-Ղազարեան Յ.**, նշվ. աշխ., էջ 216-217:
25 Շնորհակալություն ենք հայտնում Բերիո թեմի առաջնորդ Շահան եպս. Սարգիսյանին և մեր ուղեկիցներ Եագուպիե գյուղի հայ առաքելական եկեղեցու քաղաքական ատենապետ Ճապրա Պիթարին և քաղաքականության անդամ Ավետիս Օհանյանին, որոնց շնորհիվ 2011 թ. իրականացավ մեր այցելությունը Խնե:

ՄՐԵՆԸ ԵՎ ՆՐԱ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Սամվել Կարապետյան

Մրեն քավաքատեղին փռված է Ախուրյան և Տեկոր գետերի միջև երկարած տափարակ մակերևույթով հրվանդանին՝ ծովի մակերևույթից 1260-1300 մ բարձրության վրա:

Հետազոտողները քաղաքատեղիի մասին նշել են. «Յարևմտակողմն յայնկոյս գետոյն ի բաւականաչափ դաշտածև տեղւոջ է մեծ աւերակն Մրենայ, ուր երևին ի կանգուն ինչ ինչ խաչքարինք և մատրունք, և մեծ կաթուղիկէ եկեղեցին՝ զորմէ աւանդեն պատմիչք, շինեալ ի Դաւթայ Սահառունւոյ. զայս տեղի այլազգի մահմէտականք անուանեն Ղարաբաղ, իսկ հայք՝ պարզ կոչմամբ Մրէն, մանաւանդ բնակիչքն Բագարանայ որ ի Մրենայ ընդ հարաւ է իբրև մի ժամ հեռի»[1]: Նաև՝ «Հռչակաւոր և զուարճատես Մրեն, որոյ այգիքն վերինվայր յեղեղին յարձանագրութիւնս, ժամաւ հեռի կայ ի Բագրանայ ի միջակէտ ընդարձակ դաշտավայրի»[2]: Նաև՝ «Մրէն քաղաք կիյնայ Նախիջևան գիւղի արևելակողմ 3 ժամ հեռաւորութեամբ և շինուած է տափարակ դաշտի մը մէջ, որոյ հարաւային կողմէն կանցնի Ախուրեան գետ»[3]:

Նշվել են նաև՝ «Արփաչայ գետի ողջ ստորին հոսանքում՝ մի ամբողջ վերստ տարածության վրա, սփռված են քաղաքների, եկեղեցիների, տների, պարիսպների ու աշտարակների ավերակներ: Այդ ավերակների մեջ իր գեղեցկությամբ և նրբագեղ պարզությամբ առանձնապես աչքի է ընկնում Մրենի տաճարը»[4]: Նաև՝ «Անիից և Արփաչայից հավասարապես 20 վերստ դեպի հարավ՝ մեկ այլ հանգիստ հայկական մի գյուղում, թվում է, ևս հետաքրքիր ավերակներ են, պատեր և լավ պահպանված մի եկեղեցի: Այն կոչվում է Մերին»[5]:



Մրեն. քաղաքատեղիի տեղադրությունն ըստ ԽՍՀՄ զինվորական գլխավոր շտաբի 1:25.000 մասշտաբի քարտեզի (1977 թ.) և տիեզերքից կատարված լուսանկարի (լուս.՝ Google Earth, 2002 թ.)

Նաև՝ «Դիգորի Ղարաբաղ գյուղի մոտ գտնվում է Ղարաբաղի թանգարանը (Մրեն եկեղեցի)»[6]:

Կառուցապատում. ավելի քան 2 քառ. կմ մակերես զբաղեցնող քաղաքատեղիի կենտրոնական մասն իրենից ներկայացնում է մոտավորապես

1 Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, աշխատասիրութեամբ Յովհաննու եպիսկոպոսի **Շահխաթունեանց** Շահրիարցւոյ միաբանի սրբոյ Էջմիածնի, ի. երկրորդ, Ս. Էջմիածին, 1842, էջ 42:

2 **Մարգսեան Ն.**, Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 194:

3 ԳԱԹ, **Գ. Սրվանձտյան** ֆոնդ, ք. I, գ. 17, թ. 9: Տե՛ս նաև **Սրապեան Կ.**, Ստորագրութիւն Կարսի շրջակայ գիւղօրէից և վանօրէից, «ԲՀԱ», 1970, № 2, էջ 105:

4 **Надеждинъ П.**, Опытъ географіи Кавказскаго края, Тула, 1891 г., с. 256 (բնագրում՝ “Все нижнее теченіе р. Арпачая на целыя версты усеяно развалинами городовъ, храмовъ, дворцовъ, домовъ, оградъ и башень. Среди этихъ развалинъ особенно выдается своей красотой и изящной простотой Мренскій соборъ”).

5 **Martel E.-A.**, La Côte d’azur russe: Riviera du Caucase, Paris, 1909, p. 282 (բնագրում՝ “A 20 verstes au sud d’Ani et sur l’Arpa-Tchaï également, une autre ville arménienne étale, paraît-il, des ruines bien curieuses aussi, des murailles et une église bien conservée. On la nomme Merin.”, E.-A. Martel, La Côte d’azur russe: Riviera du Caucase, Paris, 1909, p. 282).

6 Kars Valiliği il Turizm Müdürlüğü, Kars, Ankara, sayfa 19.

Մրեն. քաղաքատեղիի կենտրոնական մասի և եկեղեցու տեսքը տիեզերքից (լուս.՝ Google Earth, 2002 թ.)

եռաճյուղ, մեծագույն մասով անկանոն և խճողված հատակագծերով, մոտ 300 առավելաբար բնակելի կացարանների մնացորդներով խիտ կառուցապատված տարածք, որի գրեթե կենտրոնում տեղադրված է Կաթողիկե եկեղեցին, իսկ բնակելի թաղամասերին բոլոր կողմերից հարակցում են ոչ բարձր քարաշար պարիսպներով սահմանազատված նույնպես անկանոն հատակագծերով հողակտորները, որոնք բնակավայրի շեն ժամանակ պատված են եղել մրգատու այգիներով. «Ընդհանուր տեսութեամբ յերկուս բաժանեալ էր Մրեն, տունք և այլ շինուածք ի մի կողմն, և ի միւսն այգեստանք...»[7]:

Թերևս ԺԵ-ԺՉ դարերից ի վեր վերջնականապես ամայացած այգիներն արդեն ԺԹ դարի կեսերին ամբողջապես վերածվել էին արոտավայրերի. «...այգեստանքն իսպառ խոպանացեալ՝ որք արօտ են այժմ խաշնարածաց՝ մեծատարածք են և բազմաթիւ, սահմանեալ իւրաքանչիւր շուրջանակի վարկպարազի քարակուտիւ»[8]:

Քաղաքատեղիի կառուցապատման առանձնահատկություններին անդրադարձել է նաև Կարսի թեմակալ Կյուրեղ Սրապյանը, ով 1878 թ. նշել է. «Քաղաքի շինութիւնները ընդհանրապէս եկեղեցւոյ արևելեան և հիւսիսային կողմ են, մի նեղ թաղ արևմտեան կողմ կերկննայ, իսկ քաղաքի բոլորտիք մանաւանդ հարաւային կողմ պարտեզներ են»[9]:

Ինչ վերաբերում է լայնարձակ քաղաքատեղիի ողջ տարածքով մեկ սփռված շինություններում սրբատաշ քարերի բացակայության հանգամանքին, ապա այդ երևույթը բացատրվում է դարեր շարունակ մերձաբնակ գյուղերի բնակիչների համար քաղաքատեղիի մատչելիությամբ, որի արդյունքում տեղի է ունեցել սրբատաշ քարերի լիակատար յուրացում. «...տանց առ հասարակ կործանեալ՝ հիմունքն ևեթ երևին զերեսօք գետնոյ, և չեն զարմանք թէ չգտանիցի ի քարակոյտս աւերակաց նորին կոփածոյ վէմք մեծամեծք. զի առ դաշտավայր գոլոյ ճանապարհին՝ ամենայն ուստեք դիւրութիւն մեծ է ի բաց տանել զնոսին շրջաբնակ գիւղօրէիցն»[10]:

Եվ եթե ցարդ բավականաչափ հստակ նշմարելի են բնակավայրի երբեմնի փողոցներից շատերը, ապա կարելի է ենթադրել, թե դրանք որքան որոշակի են եղել 1878 թ. «Քաղաքի փողոցներ դեռ հայտնի կերևին նույն շինութեանց կիսափուլ որմեր»[11]:

Պատմություն. Մրենի պատմության վաղնջական էջերն առայժմ մնում են չլուսաբանված: Որպես կարևոր բնակավայր՝ հայ մատենագրության մեջ առաջին անգամ հիշվում է Ե դարի կեսին, երբ պարսից արքայից արքա Հազկերտ Բ-ի (439-457 թթ.) հրովարտակը քննության առած բարձրաստիճան հոգևորականության և «պատուական երիցանց» թվում հիշվում է «...եւ Խորէն ի Մրենեայ...»[12]:

Հայտնի է, որ Մրենի բնակչությունը նշանակալի կորուստներ է ունենում արաբական տիրապետության ժամանակ (754-775 թթ.). «...կոտորումն եղեւ Քաղանու, Մրենոյ, Թալնայ, ուր սպանան ոգիք եօթն հարիւր եւ գերեցան հազար եւ երկու հարիւր»[13]:

Այնուամենայնիվ, Մրենում կյանքը շարունակվում է: Մասնավորապես 992 թ. եկեղեցին մի այգի է նվեր ստանում (տե՛ս վիմագիր **Բ**), իսկ 1041 թ. թագավորական հրամանով Մրենն ազատվում է որոշ հարկատեսակներից (տե՛ս վիմագիր **Ե**):

1163 թ. թուրք-սելջուկներն ավերում են Մրենը և ոչնչացնում 4000 բնակիչների. «...եւ մրմռեալ իբր գազան կատաղի՝ գայ ի Մրեն եւ այրէ անդ զամ-

7 **Մարգսեան Ն.**, նշվ. աշխ., էջ 195:
8 Նշվ. աշխ., էջ 196:

9 ԳԱԹ, Գ. Սրվանձտյան ֆոնդ, բ. I, գ. 17, թ. 9: Տե՛ս նաև **Մրապեան Կ.**, նշվ. աշխ., «ԲՀԱ», 1970, № 2, էջ 105:
10 **Մարգսեան Ն.**, նշվ. աշխ., էջ 195-196:
11 **Մրապեան Կ.**, նշվ. աշխ., «ԲՀԱ», 1970, № 2, էջ 106:
12 **Ղազարայ Փարպեցւոյ** Պատմութիւն Հայոց..., Երևան, 1982, էջ 100-101:
13 **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն Հայոց, Երևան, 1961, էջ 72:

Մրեն. Կաթողիկե եկեղեցու տեսքը հարավ-արևելքից (լուս.՝ Ի դարի սկիզբ)

րոցն, ուր ողջակիզեցան վասն Քրիստոսի ոգիք իբրեւ չորեք հազար...»[14]:

Սակայն Մրենն այդ արհավիրքը ևս կարողանում է սպիացնել և առանձնապես աշխույժ կյանքով ապրել ԺԳ դարի հատկապես 2-րդ կեսը:

ԺԴ դարի կեսերից սկսած՝ քաղաքն աստիճանաբար կորցնում է իր կարևորությունը և ժամանակի ընթացքում ամայանում: Երևում է, որ Մրենն այդուհետ այլևս երբեք չի բնակեցվում, քանի որ ընդարձակ ավերակավայրում ԺԴ դարից հետո ստեղծված հուշարձաններ առկա չեն:

Հետագա դարերում քաղաքատեղիի՝ վաղուց անհետացած այգիները վերածվում են խոտհարքների, իսկ եկեղեցին՝ անասնագոմի:

1878 թ., երբ Մրենը Կարսի մարզի հետ անցնում է ռուսական տիրապետության ներքո, և քաղաքատեղի է այցելում գեներալ Պոպկոն, կացությունը հետևյալն էր. «Այս տաճարը քուրդ Կասկալի հասարակությունից Բիշար-Պրտոբել օղլու անասունների փարախն է»[15]:

Կարծելով, թե դարավոր ընդմիջումից հետո քրիստոնյա տերության ներքո Մրենում կարելի է վերստին ներկայություն ապահովել, հայ հոգևորականությունը դիմում է տեղի իշխանություններին: Սակայն նույնիսկ անտերունչ եկեղեցուն վերատիրանալու ծրագիրը բախվում է ռուսական իշխանությունների շահերին, որոնք Մրենի ավերակատեղին ծրագրել էին հատկացնել վերաբնակիչ հույներին: Խնդրո առթիվ 1891 թ. նշվել է. «Անշէն և աւերակ վանքեր շատ կան Կարսի վիճակում, բայց նոցա մէջ կանգունը և վսեմը Մրէնի վանքն է, որ մի ամայի և անմարդաբնակ տեղումն է, Բագարանի Ս. Գէորգ ուխտատեղից մի ժամու հեռաւորութեամբ: Այդ վանքի շուրջը մեծ քանակութեամբ դատարկ հողեր կան, որոնց մասին ժամանակին հոգևոր իշխանութիւնը դիմում է կառավարութեանը, խնդրելով նոցա մի մասը վանքին յատկացնել, բայց բացասական պատասխան է ստացել: Սպասելով, որ մի օր այդ հողերը յոյներին կարող են տալ և յունաց գիւղ կազմել, որով և մեր վանքը կարող են դարձնել յունաց եկեղեցի՝ Կարսի աբասաշէն Ս. Առաքելոց մայր եկեղեցւոյ նման: Ես փորձ փորձեցի վանքը մաքրելու, որի համար շրջակայ հայ ժողովուրդը ձրիաբար մշակներ տուեց, բայց առանց կարևոր նորոգութեան քոյլ չեն տալու եկեղեցին օծելու և նորա մէջ ժամասացութիւն անելու, իսկ այդ նորոգու-

14 Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի, Վենետիկ, 1862, էջ 127:

15 **Առամյան Ավետիք**, Վավերագրեր Անի քաղաքի և Կարսի մարզի մերձակա վայրերի հուշարձանների պահպանության մասին, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1971, № 3, էջ 48 (բնագրում՝ "В этом храме загоняет скот куртин Каскалинского общества Бишар-Пртобек оглы"):



Մրեճ. Կաթողիկե եկեղեցու տեսքը հյուսիս-արևմուտքից (լուս.՝ ԺԹ դարավերջ և 2000 թ.)

Մրեճ. Կաթողիկե եկեղեցու տեսքը հարավ-արևմուտքից (լուս.՝ Ի դարասկիզբ և 2000 թ.)

Մրեն. Կաթողիկե եկեղեցու տեսքը հարավ-արևելքից (լուս.՝ Սեպուհ եպիս. Չուլջյանի, 2011 թ.)

թիւնը մի քանի հազար ռուբլու կարօտ է, որ ձեռք բերելը մեր միջոցներով անհնարին է»[16]:

1892 թ. նոյեմբերի 31-ին Կարսի հոգևոր կառավարությունը Էջմիածնի սինոդին հայտնում է. «...թէ վանքն Մրէնոյ չունի բնաւ զկալուած և անկարանայ սոյնն ցուցանել զմիջոց որով մարթասցի հայթհայթել սնունդ վանահօր այնր վանուց, եթէ կարգեսցի:

Հոգևոր կառավարութիւնս համարձակի ծանուցանել ի տեղեկութեան սրբազան Ատենիդ թէ՝ ի շրջակայս Մրէնոյ գտանի ազատ արքունի գետին 1073 դեսեատին տարածութեամբ և եթէ յօժարեսցի զինուորական պ. նահանգապետն ելանել ի միջնորդութիւն առ վերագոյն քաղաքական իշխանութիւնն ի յատկացուցանել յիշեալ վանուցն ի սեպհականութիւն զյիշատակեալ վայրսն յայնժամ արդեամբք նոցին դիւրութեամբ կարէ ապրել վանահայրն: Առ այս թէև փոխանորդ թեմակալին Երևանայ գերապատիւ Սուքիաս սրբազան եպիսկոպոսն գրութեամբ իւրոյ յ30 ապրիլի 1888 ամի N 354 դիմեալ էր առ պ. նահանգապետին Կարուց խնդրելով 300 դեսեատին հողս, սակայն ընկալելի էր ի նմանէ զբացասական պատասխանի, առարկելով թէ՝ վանք Մրէնի է իսպառ քայքայեալ և կարօտէ մեծաքանակ ծախուց ի պետս նորոգութեան: Մինչդեռ վանքն այն գտանի բոլորովին կանգուն դրութեամբ և գրեթէ անկարօտ վերանորոգութեան և մեծաքանակ ծախուց, զպատճենս այնց գրագրութեանց ընդ ամէն հոգևոր կառավարութիւնս առաջի առնէ սրբազան ատենիդ ի տեղեկութիւն»[17]:

Ինչպես երևում է հետագա գրագրությունից, Մրենի եկեղեցու համար, այնուամենայնիվ, հոգևոր սպասավոր է կարգվել: Համենայն դեպս 1896-1899 թթ. Մրենում վանահայր է հիշվում Սարգիս քահանա Տեր-Կարապետյանը, որն իր տնտեսական անճուկ վիճակը շտկելու նպատակով ցանկություն էր հայտնել վարձակալել 280 դեսյատին արքունի հողամաս[18]:

1900-1910-ական թթ. կատարված լուսանկարները ցույց են տալիս, որ Մրենի հուշարձանների նկատմամբ, այնուամենայնիվ, նշյալ ժամանակահատվածում որոշակի ուշադրություն դրսևորվել է: Մասնավորապես նոր շարվածքներով ամրակայվել

16 Մատենադարան, թղթ. 63, վավ. 29, թ. 2:

17 Հայաստանի ազգային դիվան (այսուհետև՝ ՀԱԴ), ֆ. 56, ց. 18, գ. 158, թ. 16:

18 ՀԱԴ, ֆ. 56, ց. 18, գ. 346, թ. 78:

են Կաթողիկե եկեղեցու որմերի ստորին՝ օդի մեջ մնացած հատվածները, որոնք այդ վիճակին էին հասել ստորին շարվածքում երեսապատի սրբատաշ քարերի հափշտակման հետևանքով: Կատարվել էին նաև մաքրման աշխատանքներ քաղաքատեղիում գտնվող Սահմադինի ապարանքի շքամուտքի շուրջ:

Նյութական ժառանգությունը. առկա նյութերը վկայում են, որ Մրենն իր պատմության ողջ ընթացքում ունեցել է զարգացման երկու գլխավոր շրջան: Դրանք էին՝ Է և ԺԳ դարերը, ինչպես նաև վերջիններիս զիջող, սակայն համեմատաբար արգասաբեր նաև միջանկյալ Ժ-ԺԱ դարերը:

Նշյալ երեք ժամանակահատվածներով էլ խմբավորվում և թվագրվում է նյութական մշակույթի մրենյան ժառանգությունը:

Վերջիններս, ըստ ցարդ պահպանված կամ սոսկ հավաստի վկայություններով գիտական շրջանակներին հայտնի տվյալների, կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

ա. քառակող կոթողներով գերեզմանոց (Ե-Է դդ.), Կաթողիկե եկեղեցի (639-640 թթ.):

բ. խաչքարեր (Ժ-ԺԱ դդ.), բազմաթիվ արձանագրություններ (992, 1041, 1063 թթ., ևս մի քանիսը՝ անթվակիր) Կաթողիկե եկեղեցու որմերին:

գ. Սահմադինի ապարանք (1261 թ.), միանավ մատուռ (1277 թ.), բազմաթիվ արձանագրություններ (1251, 1273, 1284, 1288, 1295 թթ.) Կաթողիկե եկեղեցու որմերին:

Ժամանակագրության հիմքով տարանջատված Մրեն քաղաքատեղիի՝ ահա այս երեք խմբի բաժանված հուշարձաններն էլ ներկայացվում են ստորև:

Քառակող կոթողներ. առաջինը Ե-Է դարերով թվագրվող քառակող կոթողի բեկորներն են, որոնք իրենց գոյությամբ փաստում են արդեն նշյալ ժամանակաշրջանում գերեզմանոցի գոյության մասին: Գերեզմանական այս կոթողները մեզ են հասել առանձին բեկորների տեսքով, որոնք Կաթողիկե եկեղեցու որմերին ագուցվել են ԺԱ-ԺԳ դարերում իրականացված մասնակի նորոգությունների ժամանակ (թերևս միևնույն կոթողի զույգ բեկորներն են սրանք, որոնք առկա են եկեղեցու արևմտյան և հարավային ճակատներին):

Կաթողիկե եկեղեցի. Մրենի Կաթողիկեն գտնվում է Ախուրյան գետի աջ ափից 1,1 կմ հեռու: Ծովի մակերևույթից բարձր է 1284 մ: Աշխարհագրական կոորդինատներն են՝ N 40°14′ 31.80″, E 43°39′ 46.54″:

Հայ ճարտարապետության եզակի այս կերտվածքին վերագրվող հայրենի մատենագիրներից առաջին վկայության հեղինակը եկեղեցու կառուցումից շուրջ 300 տարի հետո ապրած Հ. Դրասխանակերտցին է, որը նշել է. «Ի սմին յայսմիկ աւուրս կայսրն Հերակլ զԴաւիթ Սահառունի կուրապալատ արարեալ իշխան հայոց կացուցանէր... Եւ ի հրամանէ նորան շինէր իսկ եկեղեցին գեղեցկայարմար, որ ի քաղաքագիւղն Մրեն»[19]:

Մրեն. Կաթողիկե եկեղեցու արևմտյան և հարավային ճակատներին արտաքուստ ագուցված քառակող կոթողի բեկորները (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2000 թ.)

Հաջորդը եկեղեցու կառուցումից մոտ 600 տարի անց գործունեություն ծավալած Կիրակոս Գանձակեցին է. «Դաւիթ Սահառունի մարզպան լեալ ամս երեսուն: Յաւուր սորա ի ԿԲ (613) թուականին եղեւ շինուած կաթողիկէին Մրենոյ»[20]:

Մոտավորապես նույն ժամանակաշրջանն է մատնանշում (615) նաև Սամվել Անեցին. «Շինուած կաթուղիկէին Մղրենոյ»[21]:

Առաջնորդվելով սույն վկայություններով՝ հայր Ներսես Սարգսյանը նշել է. «Հրաշակառոյց կաթողիկէն Մրենոյ ըստ վկայելոյ մատենագրաց՝ արարք են Դաւթի Սահառունւոյ յեօթներորդ դարուն, նախ քան զծաղկել մայրաքաղաքին Անւոյ»[22]:

Տիրապետող այս կարծիքը բեկվել է միայն եկեղեցու արևմտյան ճակատի շինարարական արձանագրությունը վերծանելուց հետո. «Առհասարակ մատենագիրները տեղեկություն են տալիս, որ Դավիթ Սահառունին Մրենի մեջ կանգնեց մի շքեղ եկեղեցի: Ներկայիս, պատմագիրներ տեղեկությունները վերագրում են այժմ Մրենի մեջ կանգուն երևցող մեծ տաճարին՝ առանց որևէ վարանումի: Սակայն վերջերս այդ համոզումը կասկածելի դարձավ շենքի վրա շինության արձանագրության մասնակի վերծանումով, որ տեղի բարձրության և մասամբ քարերի մաշվածության պատճառով չէր կարդացվում: Վերջերս շնորհիվ լավ լուսանկարի, լուսանկարին վրա հնարավորին եղավ կարդալ մի քանի

19 **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ** Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 80:

20 **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն Հայոց, էջ 53:

21 **Սամուէլի քահանայի Անեցւոյ** Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 78-79:

22 **Սարգսեան Ն.**, նշվ. աշխ., էջ 196:

Մրեճ. Կաթողիկե եկեղեցու տեսքը հյուսիս-արևելքից և արևելքից (լուս.՝ Սեպուհ եպս. Չուլջյանի, 2011 թ.)

անուններ, որով հավանականագույն դարձավ, թե այս եկեղեցին ոչ թե Դավիթ Սահառունիին շինածն է, այլ Կամսարական շինարար տոհմի շառավիղներից մեկն է շինած: Արձանագրության մեջ հիշված Հերակլ կայսեր և Շիրակա ու Արշարունյաց տեր Ներսեհի անունների գոյութենեն ժամանակը միանգամայն փոխվում է և չի համապատասխանում Դավիթ Սահառունիի ժամանակին»[23]: Ի վերջո, Թ. Թորամանյանը որոշակի հանգում է այն եզրակացության, որ պատմիչների վկայությամբ 610-ական թվականների սկզբներին Սահառունու կառուցած եկեղեցին գիտությանն անհայտ մնացած մեկ այլ կառույց է. «Պատմական հիշատակությանց համաձայն Մրենի մեջ կանգներ է նաև Դավիթ Սահառունին մի հոյակապ եկեղեցի, որուն տեղը հայտնի չէ այժմ»[24]:

Շրջանառված է նաև այն կարծիքը, որ պատմիչների վկայակոչած տարեթվերն ու շինարարական արձանագրությունների թվականները պարզապես նույն եկեղեցու հիմնադրության և շինարարության ավարտի տարեթվերն են. «...իշխան Դավիթ Սահառունու կառուցած Մրենի Կաթողիկեն (ըստ պատմիչների՝ նրա կառուցումը սկսվել է 613-615 թթ. և ավարտվել է, ըստ շինարարական արձանագրության 639-640 թթ.)»[25]:

Հայտնի է, սակայն, որ պատմիչը երբ առանց մանրամասնելու մատնանշում է շինության որևէ տարեթիվ, ապա այն ընդհանրապես վերաբերում է շինարարության ավարտին, այլ ոչ հիմնադրմանը:

Ինչևէ, բավականաչափ հետաքրքրական այսօրինակ հարցերը, անշուշտ, կարելի էր ավելի դյուրությամբ լուսաբանել, եթե միայն հետազոտողները հնարավորություն ունենային բավարար չափով ուսումնասիրելու քաղաքատեղիի տարածքում կանգուն, կիսավեր կամ ավերակ տարաբնույթ հուշարձանները: Մինչդեռ այնպես է ստացվել, որ Մրեն այցելած մասնագետ այցելուներից և ոչ մեկը ցավալիորեն հնարավորություն չի ունեցել տեղում կատարելիք ուսումնասիրությունների համար մեկ օրից ավելի ժամանակ հատկացնել: Եթե սրան ավելացնենք նաև այն հանգամանքը, որ յուրաքանչյուր այցելուի ներդրած ժամանակի առյուծի բաժինն էլ հատկացվել է Կաթողիկե եկեղեցուն (իհարկե, հենց միայն այս կառույցի բավարար ուսումնասիրությունը ենթադրում է անհամեմատ ավելի տևական ժամանակի ներդրում), որը, ըստ էության, ստվերել էր քաղաքատեղիում պահպանված մնացած բոլոր հուշարձանները, ապա պարզ կդառնա ցարդ կատարված ուսումնասիրական աշխատանքների անբավարար մակարդակը: Ի դեպ, այս առումով հատկանշական է երախտաշատ Թ. Թորամանյանի նկատառումը. «Մրենը մի անգամ տեսնել շատ քիչ է. երկար օրեր և շաբաթներ են հարկավոր լիակատար ուսումնասիրության համար, բայց դժբախտաբար ես չունեցա այդ հնարավորությունը: Միայն մի օր հազիվ հնարավոր եղավ Մրենն անցնելու և կանգուն տաճարն ուսումնասիրելու»[26]:

Մեր կողմից ցանկանում ենք հավելել, որ 2002 թ. տիեզերքից կատարված լուսանկարն իրապես պարզում է, որ, խնդրո առարկա Կաթողիկե եկեղեցուց զատ, Մրենում, իրոք, եղել է և կա առնվազն ևս մեկ (թերևս՝ երկու) մեծաղիր եկեղեցի (չհաշված մատուռները): Սպասվելիք ուսումնասիրությունները գուցեև հաստատեն Թորամանյանի տեսակետը:

Մրեն. կենտրոնագմբեթ եկեղեցու մնացորդների տեսքը տիեզերքից (լուս.՝ Google Earth, 2002 թ.)

23 **Թորամանյան Թ.**, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Երևան, 1942, էջ 295:

24 Նշվ. աշխ., էջ 246:

25 **Հասրաթյան Մ.**, Հայկական վաղքրիստոնեական ճարտարապետությունը, Մոսկվա, 2010, էջ 34:

26 **Թորամանյան Թ.**, նշվ. աշխ., էջ 295: Ի դեպ, 2000 թ. հուլիսի 19-ին մեզ ևս բախտ վիճակվեց այցելել Մրեն և վայելել տեղում «աշխատելու» բերկրանքը, որը, ցավոք, սահմանափակվեց հազիվ 15 րոպեի սահմաններում, քանի որ վրա հասած թուրք սահմանապահները խափանեցին ցանկալի աշխատանքը (հատկանշական էր, որ թուրք սահմանապահները բավականաչափ զգոն են զբոսաշրջիկների մուտքն արգելելու խնդրում, իսկ պարբերաբար և տևականորեն հնավայրը տակնուվրա արած և անող մերձաբնակ գանձախույզների նկատմամբ՝ միանգամայն անզգա ու անտարբեր): Ինչևէ, հենց այդ օրը ձեռք բերված լուսանկարների շնորհիվ ներկա հոդվածը հագեցած է երբևէ գիտական շրջանառության մեջ չներմուծված բոլոր վիմագրերի լուսանկարներով և դրանցից ստացված գրչանկարներով: Ինչ վերաբերում է 2005-2006 թթ. միջակայքում կործանված հարավային ճակատին, որի արդյունքում ներկայումս փլատակների ներքո են հայտնվել այդ որմին ներքուստ և արտաքուստ ագուցված խաչքարերը, քառակող կոթողը և արտաքուստ փորագրված արձանագրությունները, ապա վերջիններիս մասով մեր լուսանկարները փաստորեն բացառիկ են (այցելությունն իրականացնելու համար պարտական ենք մեր առաջնորդ ազատամարտիկ Վարդան Սամսոնյանին):

Եկեղեցիներից մեկը գտնվում է քաղաքատեղիի հարավարևելյան կողմում՝ Կաթողիկե եկեղեցուց 350 մ արևելք (փոքր-ինչ հարավ-արևելք ուղղությամբ)՝ բնակելի թաղամասի մեջ: Աշխարհագրական կոորդինատներն են՝ N 40°14′ 29.54″, E 43°40′ 00.00″: Սրա մնացորդները սպիտակին են տալիս կրաշաղախով կառուցված լինելու պատճառով և դրանով իսկ զանազանվում են քաղաքատեղիի բազմաթիվ այլ շինությունների ավերակներից: Ունի կենտրոնագմբեթ հորինվածք և մոտավորապես 20 x 23 մ արտաքին չափեր:

Եկեղեցու նմանվող երկրորդ կառույցի մնացորդները գտնվում են քաղաքատեղիի հյուսիսային կողմում՝ բնակելի թաղամասերից փոքր-ինչ մեկուսի դիրքով: Աշխարհագրական կոորդինատներն են՝ N 40°14′ 42.12″, E 43°39′ 44.87″: Կառույցը բոլորաձև է և ունի մոտ 24-25 մ տրամագիծ: Այլ խոսքով,

Մրեն. բոլորաձև հատակագծով եկեղեցու նմանվող մնացորդների տեսքը տիեզերքից (լուս.՝ Google Earth, 2002 թ.)

եթե ապագա հնարավոր ուսումնասիրությունները պարզեն, որ ավերակը եկեղեցի է, ուրեմն կարող է բացահայտվել թերևս Զվարթնոցի հորինվածքը կրկնած մի նոր եկեղեցի (կասկածը, որ այս մեկը կարող է և եկեղեցի չլինել, հիմնված է որմերի ավելի թուխ գույնով, մինչդեռ կրաշաղախի պարագայում դրանք սպիտակին են տալիս):

Ճարտարապետություն. Մրենի Կաթողիկե եկեղեցու ճարտարապետական նկարագրին (ինչպես և վիմագրերի վերծանության խնդրին) առաջինն անդրադարձել է հայր Ն. Սարգսյանը. «Ձփառահեղ մեծութենէ եկեղեցւոյս՝ համարիմ ճշդիւ ասացեալ թէ բանձրութեամբ որմոցն և քարանցն ստուարութեամբ և սեանցն չորեցուն և կամարացն ձգելոց՝ զանազանէ քան զբազում հոյակապ եկեղեցեօք Շիրակայ որ յայսկոյս են Ախուրեան գետոյ. ընդ Շիրակաւանին կշռեալ՝ սա լայնանիստ է քան զնա. թէպէտ փոքր մի կարճագոյն. այլ ընդ կաթողիկէին Անւոյ երկրորդ է սա, իշխէի ասել և նորին ճարտարապետի արհեստակերտեալ, եթէ խտրոց չէր ի միջի ժամանակացն բացակայութիւն»[27]: Երախտա-



Մրեն. Կաթողիկե եկեղեցու առաջին չափագրությունը (հեղ.՝ հայր Ներսես Սարգսյան)

շատ հոգևորականը մինչև իսկ եկեղեցու հատակագիծը ներկայացնելու փորձ է կատարել[28]:

Հաջորդ հեղինակը, ով առավել հպանցիկ, սակայն, այնուամենայնիվ, անդրադարձել է եկեղեցու ճարտարապետական նկարագրին, Կարսի թեմակալ Կ. Սրապյանն է: Նրա՝ 1878 թ. կազմած տեղեկագրում կարդում ենք. «Եկեղեցին կարմիր և թուխ քարերէ շինուած է...: Գմբէթաւոր եկեղեցին կը բարձրանայ չորս սեանց վրայ իր փառաւոր և հոյակապ շինութեամբ քաղաքի մէջ տեղ, երեք դուռ ունի, արևմուտք, հարաւ և հիւսիս...»[29]:

Մեծապես շահեկան է նաև Կարապետ Օհանջանյանցի վաստակը: Նա զուտ Մրենին նվիրված ընդարձակ հոդվածը լույս է ընծայել 1881 թ.[30]:

Կաթողիկե եկեղեցու՝ ճարտարապետական ուղղվածությամբ առավել հանգամանալից ուսումնասիրությունը (անշուշտ, համեմատության մեջ, քանի որ գիտնականի վերլուծությունները հենված էին միայն մեկ օրվա ուսումնասիրությունների վրա) հեղինակել է ճարտ. Թ. Թորամանյանը:

Առաջինը, որ, իբրև եզրակացություն, նկատել է գիտնականը, եկեղեցու՝ ի սկզբանե ոչ թե գմբեթավոր, այլ եռանավ բազիլիկ եղած լինելու խնդիրն էր. «...ինչպես Տեկորի տաճարին հատակագծի վրա անմիջապես կպարզվի, թե Մրենի տաճարը ևս եղեր է մի ժամանակ Տեկորի տաճարի նախնական շինության նման, արևելքեն արևմուտք ձգված միջին լայն և կողմնակի նեղ թևերով (nef), խաչաձև անջատ մույթերով կամարակապ մի շենք, առանց գմբեթի, որուն նախնական կառուցումեն շատ հե-

27 **Մարգսեան Ն.**, նշվ. աշխ., էջ 196:

28 Ն. Սարգսյանի՝ առաջին անգամ ներկայացրած սխեմատիկ հատակագիծը (տե՛ս նշվ. աշխ., էջ 195) վերահրատարակել է նաև Ղ. Ալիշանը (տե՛ս նրա՝ Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 137):

29 ԳԱԹ, Գ. Սրվանձտյան ֆոնդ, բ. I, գ. 17, թ. 9-10: Տե՛ս նաև **Մրապեան Կ.**, նշվ. աշխ., «ՔՀԱ», 1970, № 2, էջ 105:

30 **Յովհաննջանեանց Կ.**, Մրէն, «Մեղու Հայաստանի», 1881, № 143, 25 յուլիսի, էջ 1-2; № 146, 29 յուլիսի, էջ 1-2:

տո, տվեր են այսօրվան ձևը»[31]: Գիտնականը միանգամայն համոզված է, որ Կաթողիկե եկեղե-



Մրեն. Կաթողիկե եկեղեցու հատակագիծն ըստ Թ. Թորամանյանի

ցին հիմնվել է նախաքրիստոնեական տաճարի տեղում, ուստի այդ առթիվ նշել է. «Ի՞նչ էին 3-րդ կամ 4-րդ դարերում մեջ գոյություն ունեցող այդ միօրինակ հսկա շինություններ, որոնց վրա ոչ շինության կանոնավոր արձանագրություն կա և ոչ ալ պատմագրական հիշատակություն: Հայոց պատմագիրներ այս շենքերեն շատ նվազ կարևորություն ունեցող եկեղեցիները հիշատակեր են և երկնանման փառքերով պսակեր են, այլև զանոնք կանգնողներու սրբությունն ու բարեպաշտությունը փառաբանելու համար բանաստեղծական ներբողներ են հյուսեր: 7-րդ դարուն Դավիթ Սահառունիի մը Մրենի մեջ շինած եկեղեցին, որուն հետքը այսօր չկա, չէ մոռացված հիշատակելու, իսկ անոր քովիկը Կամսարականի մը ձեռքով կանգնած (ավելի ճիշտը՝ փոխարկված) հսկա եկեղեցին ի՞նչ պատճառ կար չհիշելու: Արդյոք այդ շենքերու ծագումը մոռցնե՞լ տալ կուզեին մեր պատմագիրներ, թե՞ իսկապես իրենց օրով կանգնված շինություններ չէին անոնք: Այս վերջինը ավելի հավանական է: Սույն մի շարք հսկա տաճարներու մասին ոչ միայն 7-րդ դարու պատմագիրներ լուռ են, այլև 5-րդ և 6-րդ դարերու պատմագիրներ, հիշելով հանդերձ իրենց օրով կանգնած եկեղեցիներու անուններն ու տեղերը, երբեք չեն արձանագրած գոնե մյուսներուն մեկ կամ երկուքին անունը: Շատ պարզ է, որ մեզ ծանոթ 5-րդ և 6-րդ դարերու պատմագիրներու ապրած թվականներեն առաջ կանգուն էին անոնք, այլևս ի՞նչ հարկ պիտի ստիպեր զիրենք գրելու:

Չե՞նք կարող արդյոք այս ձևի հնագույն տաճարներու վրա հայոց հեթանոսական մեհյաններու պարզ դրոշմը տեսնել, քանի որ անոնք հեթանոս հայոց կրոնակից հունա-հռոմեական մեհյաններուն շատ մոտիկ նմանություն ցույց կուտան»[32]: Նաև ավելացնում է. «...տարօրինակ չի լինիր ենթա-

Մրեն. Կաթողիկե եկեղեցու հարավային (լուս.՝ 2000 թ.) և հյուսիսային (լուս.՝ Սեպուհ եպս. Չուլջյանի, 2011 թ.) ճակատներից բացված լուսամուտների պսակներ և շրջանակ

դրել, որ եթե Երերույք ու Մրեն և այլ նմաններ մեհենական պարզ դրոշ մը կկրեն, կարող էին ավելի ուշ ժամանակ փոխարկված լինել, քան իրենց նախորդները, փոխարկման ժամանակի քրիստոնեության պահանջներուն համեմատ հավելվածներու ենթարկվելով»[33]:

Մրենի Կաթողիկեն հիրավի «Հայաստանի հին ճարտարապետությանը մեծ պատիվ բերող շենքե-

31 **Թորամանյան Թ.**, նշվ. աշխ, էջ 201:
32 Նշվ. աշխ., էջ 210:
33 Նշվ. աշխ., էջ 211:

Մրեն. հատվածներ Կաթողիկե եկեղեցու արևմտյան և հյուսիսային ճակատներից (լուս.՝ Սեպուհ Եպս. Չուլջյանի, 2011 թ.)

րեն մեկն է...»[34] և, անշուշտ, զուգակցելի դարաշրջանի առավել արժեքավոր տաճարների հետ. «Basilique ոճի խիստ շքեղ օրինակներն են Արուճի մեջ Գրիգոր Մամիկոնյանի, Մրենի մեջ Կամսարականի շինած կաթուղիկեները և Էջմիածնի մոտ Գայանեի վանքը՝ Եզր կաթողիկոսի շինած. այս եկեղեցիներու մեջ բնորոշ նորություն մը եթե կա, այն է, որ արևմտյան կողմը սենյակներ չունեն, իսկ արևելյան կողմի սենյակները փոխանակ հավասարակողմ քառակուսիի՝ ավելի երկարած են դեպի արևելքեն արևմուտք՝ հակառակ նախորդ դարու հավասարակողմ քառակուսիին»[35]:

Նկատվել են նաև մասնավոր այլ առանձնահատկություններ. «Ինչ որ ավելի տարօրինակ է և գրեթե հակառակ հայոց եկեղեցիներու ավանդական օրենքին, Մրենի տաճարի կիսաբոլոր խորանին երեք մեծ պատուհաններն ունենալն է. թերևս առաջին և վերջին օրինակն է այս ձևով խորան հայոց մեջ և ուղղակի ազդված Կոստանդնուպոլսո Ս. Սոֆիա եկեղեցիի խորանեն»[36]:

Խորանից բացված երեք լուսամուտների վերաբերմամբ ճարտարապետի հայտնած այսօրինակ կարծիքը, անշուշտ, տարակուսանք է առաջացնում, քանի որ գիտնականը քաջածանոթ էր, օրինակ, Արուճի Սբ. Գրիգոր, Թալինի Կաթողիկե, Արթիկի Սբ. Գրորգ, Բագավանի Սբ. Հովհաննես և վերջապես Վաղարշապատի Սբ. Հռիփսիմե եկեղեցիներին, որտեղ ամենուր առկա են խորանից բացված երեք լուսամուտներ: Այս առումով երևույթը պարզորոշ արտացոլումն է Եզր կաթողիկոսից մինչև Հովհան Օձնեցի պաշտոնապես ընդունված (սակայն Եզրից առաջ էլ արդեն տարածում գտած) քաղկեդոնական գաղափարաբանության, ուստի ոչ թե «տարօրինակ է», այլ օրինաչափ, որ է դարում կառուցված Մրենի Կաթողիկեն ևս ունի «հայոց եկեղեցիներու ավանդական օրենքին» հակառակ ծիսական գաղափարաբանությամբ թելադրված և ճարտարապետությամբ դրսևորված տարրեր[37]:

Ինչ վերաբերում է այն դիտարկմանը, թե «Իբրև բացառիկ երևույթ նկատելի է Մրենի տաճարին վրա, արևելյան կողմեն կիսաբոլորակ խորանին դուրս շեշտվիլը: Ինչպես կերևի, 7-րդ դարուն բոլոր խաչաձև եկեղեցիներու վրա, կիսաբոլորակներու (abside) դուրս շեշտվիլը ընդհանրացած նորաձևություն էր, թերևս այդ նորաձևությունն է, որ ազդեր է Մրենի տաճարին վրա, բայց որ չափ տևել է այդ նո-

Կաթողիկե եկեղեցու խորանի ներքո գտնվող թաղակապ սենյակը՝ ավերակված գանձախույզների ձեռքով (լուս.՝ Սեպուհ եպս. Չուլջյանի, 2011 թ.)

րաձևությունը՝ հայտնի չէ...»[38], ապա հարկ է նկատել, որ այդ «նորաձևությունը» բնավ էլ է դարի յուրահատկությունը չէ, այլ հանդիպում է արդեն Դ-Ե դարերով թվագրվող պաշտամունքային բազմաթիվ կառույցներում[39]: Այսու՝ էլ առավել համոզիչ չէ երախտաշատ գիտնականի այն պնդումը, թե «Անդրադառնալով Մրենի տաճարին դուրս հանված կիսաբոլորակ խորանին, պիտի ըսեմ, որ երկար քառակուսի հատակագծով եկեղեցիներու մեջ խորանը արևելյան պատեն դուրս հանելու հազվագյուտ օրինակներեն մեկն է 7-րդ դարուն մեջ: Ավելի հավանական է 9-րդ կամ 10-րդ դարուն դուրս հանված լինի, որուն անմիջապես հաջորդած է երեք դուրս ցցված խորաններու (abside) սովորությունը: Համոզվելու համար, բավական է քննական հայացք մը նետել խորանին արտաքո կարգի խորության վրա, որ մեկ ու կես անգամեն ալ ավելի է սովորական խորաններու խորություններեն: Մի օր պետք տեսնելով կամ ավելի մեծ խորության և կամ հատկապես խորանը դրսեն տեսանելի ընելու դիտմամբ, քանդեր են արևելյան պատը և դուրս հաներ են: Խորանին երկու կողմի սենյակներուն ծածկը ավելի նորագույն ար-

34 Նշվ. աշխ., էջ 295:

35 Նշվ. աշխ., էջ 125:

36 Նշվ. աշխ., էջ 297:

37 Կաթողիկեի խորանից բացված երեք լուսամուտների առթիվ, քաղելով Ա. Երեմյանից, դր Մ. Հասրաթյանը նշել է. «Շենքի ծավալից դուրս է գալիս միայն արտաքուստ բազմանիստ աբսիդը, որը լուսավորվում է երեք պատուհաններով. դա կառուցողի՝ Եզր կաթողիկոսի քաղկեդոնական արտահայտությունն է (Ա. Երեմյան)» (**Հասրաթյան Մ.**, Հայկական վաղքրիստոնեական ճարտարապետությունը, Մոսկվա, 2010, էջ 34):

38 **Թորամանյան Թ.**, նշվ. աշխ, էջ 214:

39 Նմուշները տե՛ս **Հասրաթյան Մ.**, նշվ. աշխ., էջ 195-196,198-204, 224-227, 256-259:

Մրեն. Կաթողիկե եկեղեցու ներքին տեսքը դեպի արևմուտք (լուս.՝ 2000 թ.)

վեստագործության դրոշմն ունի, voute darete ըսված ոճի կամարով ծածկված է և հազիվ 12-րդ դարու հնություն ունի հայոց արվեստին մեջ...»[40]:

Շատ այլ եկեղեցիների նման Մրենի Կաթողիկեն խորանի ներքո ունեցել է թաղակապ սենյակ. «Մի քանի եկեղեցիներ ունին առանձնապես խորանին ներքև ալ դատարկություններ գետնափոր, ինչպես Մրենի եկեղեցի...»[41]: Այն ներկայումս գանձախույզների ձեռքով ավերված է:

Եկեղեցու կամարների հորինվածքի մասին, որոնք գոնե ձեռքի տակ եղած լուսանկարների հիման վրա, իրոք, կիսաշրջանի տպավորություն են թողնում, Թ. Թորամանյանը նշել է. «...միայն Մրենի եկեղեցիին աղեղներն են, որ թեև դարձեալ բեկում ունին կատարին վրա, սակայն այնքան քիչ, որ անզգալի է և առաջին նայվածքով ուղիղ կիսաբոլորակի տպավորությունը կթողու»[42]:

Անդրադառնալով ծածկերին՝ նշենք, որ Մրենի Կաթողիկեն սակավաթիվ այն հուշարձաններից է, որն առ այսօր ութանիստ վեղարին կրում է իր նախնական (Է դարից) բարձրորակ կղմինդրով պատված ծածկի զգալի հատվածներ. «Որ հնում աղյուսը կատարելապես ձուլել և թրծել գիտեին, վկայում են մինչև այժմ դեռ կանգուն հնագույն շենքերի, ինչպես՝ Մրենի, Աշտարակի, Բագարանի, Տեկորի, Զվարթնոցի և ուրիշների վրա եղած կղմինդրները, որոնք ոչ միայն չափազանց լավ եփված են, այլև ձևով այնքան լավ մշակված չեն անցկացնում ներքև»[43]:

Եկեղեցու կղմինդրածածկի մասին ուշագրավ դիտարկումներ ունի նաև 1920 թ. Մրեն այցելած Աշխարհիբեկ Քալանթարը. «Բարեբախտաբար Մրենի գմբեթը պահպանվել է նախնական՝ սկզբնական ծածկը կղմինդրով: Բացի այդ, գմբեթի կղմինդրները տափակ չեն, այլ կիսաբոլոր, կես արած գնդի նման: Կղմինդրների կտորներ անթիվ քանակությամբ թափված էին Բագարանի Ս. Թեոդորոսի շուրջը (այնտեղ կան և տափակներ), պարզ է, որ նրա գմբեթն էլ Մրենի նման ծածկ է ունեցել»[44]:

Եկեղեցին նշանակալի նորոգությունների է ենթարկվել ԺԳ դարում: Դրանք առանձնապես ակնհայտ են եկեղեցու հարավային (ներքուստ և արտաքուստ) և արևմտյան (միայն արտաքուստ) ճակատներին: Այս մասին նշել են և՛ Թ. Թորամանյանը. «Մրենի կաթուղիկեին հարավային պատին կեսեն ավելին հիմեն վեր վերստին նորոգված է...: Այժմ ալ նույն պատը վտանգված է»[45], նաև՝ «Չգիտեմ՝ ինչ պատճառով, արևմտյան ճակատի արտաքին քարերի մի նորոգություն է հարկ եղած 13-րդ դարում: Հատկապես զանազան չափերով մի խումբ խաչքարեր պատին ամրացնելու դիտավորությամբ շենքի ճակատի քարերը քանդեր են և վերին աստիճանի ճարտարությամբ նորանց տեղը շարել են 10-րդ և 11-րդ դարերու խաչքարերը, որոնք մինչև այսօր պատին հետ լիակատար ձուլված՝ մնացել են անվնաս»[46], նաև՝ «Հարավային ճակատի արևմտեան անկյունին մոտ, պսակեն մինչև դռան կամարը (նմանապես արևմտեան կողմն ալ) չորսեն մինչև հինգ մետր լայնությամբ՝ պատռեր են պատը և վերստին տեղը նոր քարեր շարեր են: Այս քանդումը կամ փոփոխությունը, հնացած կամ որևէ արկածով վնասված մասի մը նորոգության երևույթը չունի ամենևին. կարծեք թե հատկապես այդ մասին վրայեն մի հիշատակություն կամ մի ուրիշ անհաճո բան անհետացնելու դիտումով քանդած և վերաշինած են: Այս ըսածիս հավանական ճշմարտության կհամոզվին ամեն անոնք, որոնք մասնագիտորեն քննելով կտեսնեն, թե ինչպես պատին վրա դեռ մինչև այսօր ալ առողջ մնացած մեծ ծավալով քարեր հակուղիղ ձևով տաշված և անոնց վրա նոր քարեր պատշաճեցուցված են: Հավանաբար այս փոփոխությունը կատարվել է 13-րդ դարում, որովհետև այդ մասին վրա գրված արձանագրություններ, որոնց ամենահինը Չ թվականը չանցներ»[47], «...Մրենի տաճարին արևելյան և հարավային պատերու մեջ ագուցված խաչքարերը 10-րդ դարու գերեզմաններու վրա է քանդելով՝ բերած շարած են այնտեղ: Հավանորեն տաճարը նորոգողի տոհմին հիշատակարաններն էին անոնք. հետևաբար Մրենի տաճարը պետք է որ նորոգված լինի 10-րդ դարու կեսեն հետո, եթե ոչ ավելի շատ ուշ, որով անկյուններու սյունանման քանդակվածքն ալ կլինի 10-րդ դարու կեսեն հետո շինված գործ»[48] և՛ ավելի ուշ նաև Ա. Քալանթարը. «Մրենի եկեղեցին նորոգումներ շատ է կրել: Պատերի մեջ մանավանդ արևմտյան՝ դրսից, և հարավային՝ դրսից ու ներսից, ահագին քանակությամբ խաչքարեր են դրված: Բազմապիսի և ընտիր օրինակներ են դրանք անխտիր բոլորը: Արևմտյան պատում մուտքի գլխի զարմանալի ռելիեֆի գլխին եղել է ըստ երևույթին կլոր ձև ունեցող ընդարձակ ռելիեֆ (այժմ ներքևում մի չնչին բան է մնացել շրջանակի կտորով), շատ տեղերում շատ բան է փոխված: Շինության արձանագրության սկիզբը և վերջը, մի-մի քար, նույնպես խաչքարերի է փոխվել»[49]:

Նորոգության ընթացքում երեսապատի սրբատաշ քարերը խաչքարերով փոխարինելն ընդհանուր առմամբ ընդմիջել են որմի ողորկ միապա-

40 **Թորամանյան Թ.**, նշվ. աշխ., էջ 216:
41 Նշվ. աշխ., էջ 149:
42 Նշվ. աշխ., էջ 180:
43 Նշվ. աշխ., էջ 142:
44 **Քալանթար Ա.**, Հայաստան. քարե դարից միջնադար, ԵԺ, հ. 4, Երևան, 2007, էջ 192:
45 **Թորամանյան Թ.**, նշվ. աշխ., էջ 133:
46 Նշվ. աշխ., էջ 296:
47 «Ախուրյան», 1909, օգոստոս 9: Տե՛ս նաև **Թորամանյան Թ.**, նշվ. աշխ., էջ 191,193:
48 Նշվ. աշխ., էջ 193:
49 **Քալանթար Ա.**, նշվ. աշխ., էջ 192-193:



Մրեն. հատվածներ Կաթողիկե եկեղեցու գմբեթի և խորանի գմբեթարդի ներքին ծավալներից (լուս.՝ Սեպուհ եպս. Չուլջյանի, 2011 թ.)

ղաղութիւնը, և դժվար է գեղարվեստական առումով միանշանակ գնահատական տալ, սակայն կա նաև այսպիսի կարծիք. «...հարաւային պատին գետնէն չորս մէթր բարձրութեան վերայ գտնուող 10-րդ դարու խաչքարերը եթէ իբր զարդարանք ընդունինք, զարտուղի եւ անհաճոյ տպաւորութիւն մը կը գործեն յուշարձանին ներքին միասնականութեան մէջ»[50]:

Եկեղեցին ներքուստ ամբողջապես սվաղված է եղել, և տեղ-տեղ դեռևս նկատելի է նաև որմնանկարազարդ: Քիչ թե շատ բարվոք դրության մեջ են խորանի գմբեթարդի հարավային կողմում միմյանց հաջորդող մեդալիոնակերպ սրբապատկերները (պահպանվել է երեք ամբողջական և 1 հատվածական սրբապատկեր). «Խորանի կիսաբոլորակը ծեփուած է եւ վրան առաքեալներու ուրուագծերը քանդակուած են պարզ ակօսներով, ինչ որ կիսաւարտ մնացած է»[51]:

Եթե եկեղեցու ներքին հարդարանքում աչքի են ընկել որմնանկարները, ապա արտաքին հարդարանքում՝ լուսամուտների պսակները (ի դեպ, ավանդատներից դեպի արևելք բացված լուսամուտների պսակներն իրենցից ներկայացնում են իրար փաթաթված վիշապներ), քիվագոտիները և հատկապես հյուսիսային և արևմտյան մուտքերի բարավորները (ԺԳ դարից հետո, անշուշտ, նաև հարա-

Կաթողիկե եկեղեցու հարավային որմին ԺԳ դարի նորոգության ժամանակ ներքուստ ագուցված խաչքարերը (լուս.՝ 2000 թ.), որոնք 2005-2006 թթ. որմի այդ հատվածի փլուզումից հետո հայտնվել են փլատակների մեջ

50 **Մարզպանեան Յ.**, Բաղդատական ակնարկ մը կրօնական ճարտարապետութեան վրայ հայ ճարտարապետութեան տեղը աւոր մէջ, Իսթանպուլ, 1970, էջ 123:

51 Նշվ. աշխ., էջ 121:

Կաթողիկե եկեղեցու արևմտյան մուտքի բարավորը (լուս.՝ Սեպուհ եպս. Չուլջյանի, 2011 թ.)

վային և արևմտյան որմերին նորոգման ժամանակ ագուցված բազմաթիվ խաչքարերը):

Առավել զուսպ է հարավային ճակատից բացված մուտքի բարավորը: Այստեղ քարի ողորկ մակերեսի կենտրոնում բոլորաձև շրջանակի ներքո հավասարաթև խաչի քանդակ է, մինչդեռ հյուսիսային և արևմտյան մուտքերի բարավորները պատված են հարուստ բարձրաքանդակներով, որոնց առաջին նկարագրությունը տվել է հայր Ն. Սարգսյանը. «Են սորա բարձրաքանդակ պատկերք վերոյ հիւսիսային և արևմտեան դրանցն. ի հիւսիսայինումն է երիվար համետեալ և առ նմա այր մի անկեալ ի ծունկս առաջի խաչի բարձրացելոյ ի ձողի, զոր կալեալ ունի մանուկ մի նոյնպէս ի ծունկս անկեալ. յետոյ նորա մորուեղ ծեր մի երկայն պարեգօտիւ ի նոյն դիրս այլոց և յաջոց ձեռին երկայն քսակ. յետոյ ամենեցուն ծառ մի: Իսկ յարևմտեանն են հրեշտակք երկու յոտին, և ստորև նոցա արք վեց, և ոմանց ի նոցանէ մատեան ի ձեռին»[52]:

1878 թ. Կարսի առաջնորդին նույնպես հետաքրքրել են բարձրաքանդակները. «...արևմտեան դռան վերայ վեց պատկերներ քանդակուած են և սոցա գլխոյն վերայ երկու հրեշտակներ թևատարած, իսկ հարաւային դռան վերայ կայ քանդակուած մի ձի, մի խաչադրօշ կրող անձ, մի ի կուճ եկեալ, մի բուրվառակիր, և մի ևս եօթաճիւղ ծառ»[53]: Այդ մասին նշվել է նաև. «...քանդակագործական խումբ կայ և Մրէնի տաճարի մէջ, որտեղ պատկե-

52 **Սարգսեան Ն.**, նշվ. աշխ., էջ 196:

53 ԳԱՄԹ, Գ. Սրվանձտյան ֆոնդ, բ. I, գ. 17, թ. 9: Տե՛ս նաև **Սրապեան Կ.**, նշվ. աշխ., «ԲՀԱ», 1970, № 2, էջ 105:

Կաթողիկե եկեղեցու հյուսիսային (լուս.՝ Սեպուհ եպս. Չուլջյանի, 2011 թ.) և հարավային (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2000 թ.) մուտքերի բարավորները

րացրած են աշխարհական անձինք, որոնցից մէկ իշխանի գլխին ապարօշանման զարդ կայ»[54]:

Արդեն 1881 թ. արևմտյան մուտքի պատկերաքանդակներն այսպես է մեկնաբանել նաև Կ. Օհանջանյանցը. «...զարդարուած է գրեթէ մէկ արշինաչափ բարձրութեամբ 5 ուռուցիկ արձաններով, որոնցից մէջ տեղի երեքը պատկերացնում են 3 աւերատարանիչներին, որոնք բռնած ունեն աստուծոյ խօսքերը, իսկ երկու, աջ և ձախ կողմերի արձանները թերևս հրեշտակներ լինեն, որոնք մատնանիշ լինելով դէպի Փրկչի աշակերտները՝ պատուիրում են հնազանդուել Աստուծոյ խօսքերին: Սոցա բարձր, կիսաքանդ կամարի ներքև շինուած են երկու աւելի մեծ և բարձր արձաններ, դոքա թռչունի պէս թեր ունեն, աջ ձեռքերը կուրծքերին դրած, որ հպատակութեան և խոնարհութեան յատ-

54 «Հովիւ», 1907, № 33, էջ 525:

Կաթողիկե եկեղեցու հարավային որմին ԺԳ դարի նորոգության ժամանակ արտաքուստ ագուցված խաչքարերը (լուս.՝ 2000 թ.), որոնք 2005-2006 թթ. որմի այդ հատվածի փլուզումից հետո հայտնվել են փլատակների մեջ

Կաթողիկե եկեղեցու հարավային որմին ԺԳ դարի նորոգության ժամանակ արտաքուստ ագուցված խաչքարերը (լուս.՝ 2000 թ.), որոնք 2005-2006 թթ. որմի այդ հատվածի փլուզումից հետո հայտնվել են փլատակների մեջ

կանիշն է, թերևս աղօթում են եկեղեցականների համար և պահպանում են նոցա: Ինչպէս ասացինք, այս երկու հրեշտակների բարձրով անցնում է դռան կիսաբոլոր շրջանակը նեղ և սրանկիւն շերտերով, որի վերայ քանդակուած կայ խաղողի լայն տերևներ ուռուցիկ ողկոյզներով»[55]:

Թ. Թորամանյանը գտնում է, որ պատկերաքանդակներն «...ավելի պատմական նշանակություն ունին, քան գեղարվեստական: Այս քանդակներուն մեջ մենք կտեսնենք 7-րդ դարու հայ իշխանին ու ազնվականին տարազը իր բոլոր մանրամասնություններով, որուն անփոփոխ շարունակությունը պահված է քուրդ պեյերու մեջ»[56]: Գիտնականը նաև նկատել է, որ երկու մուտքերին առկա բարձրաքանդակները «...բավականին մեծ են և խառն են կրոնական ու աշխարհիկ մարդկանց պատկերներով. այս պատկերները չափազանց շահեկան են ազգագրական տեսակետով. որովհետև կրոնական բարձրաքանդակները, եթե բյուզանդական պատկերների ոճը կամ տիպը ունին, այնուամենայնիվ աշխարհիկ մարդկանց պատկերները զուտ տեղական տարազով հագնված մարդիկ են»[57]:

Կարծիք կա նաև, թե քանդակաշարը ներկայացրել է կտիտորների աղոթքը «...սրբերի ամբողջ շարքի առջև (այստեղ են Քրիստոսը, Պողոս և

55 **Յովհաննէսեանց Կ.**, Մրէն, «Մեղու Հայաստանի», 1881, № 143, 25 յուլիսի, էջ 1:
56 **Թորամանյան Թ.**, նշվ. աշխ., էջ 175:
57 Նշվ. աշխ., էջ 296:

Կաթողիկե եկեղեցու արևմտյան որմին ԺԳ դարի նորոգության ժամանակ արտաքուստ ագուցված խաչքարերը (լուս.՝ 2000 թ.), որոնք դեռևս հարատևում են իրենց նախնական տեղում

Պետրոս առաքյալները, ևս մեկ սուրբ, հավանաբար՝ Գրիգոր Լուսավորիչը)»[58]:

Ինչ վերաբերում է ԺԳ դարում իրականացված նորոգությունների ժամանակ եկեղեցու որմերին ընդհանուր թվով ագուցված 51 խաչքարերին, ապա նրանցից 16-ն արտաքուստ ագուցված է եղել արևմտյան (դրանցից 8-ը դեռևս տեղում է), իսկ 35-ը՝ հարավային ճակատին: Վերջիններիցս 23-ն ագուցված է եղել որմի արտաքին, իսկ 12-ը՝ ներքին երեսապատի մեջ, ընդ որում, դեռևս մինչև 1950-ական թթ. նրանցից 5-ն անհետացել է եկեղեցու հարավարևմտյան անկյանը հարող հատվածի փլուզ-

58 **Մնացականյան Ս.**, Հայկական աշխարհիկ պատկերաքանդակը, Երևան, 1976, էջ 9:



Կաթողիկե եկեղեցու տեսքը հարավ-արևմուտքից (լուս.՝ Երմակովի, 1890-ական թթ.) և հարավից (լուս.՝ Սեպուհ եպիս. Չուլջյանի, 2011 թ.)

ման հետևանքով, իսկ մնացած 30-ը (12-ը՝ ներքուստ, իսկ 18-ը՝ արտաքուստ) փլատակների մեջ է հայտնվել 2005-2006 թթ. հարավային ճակատի մեծագույն մասի փլուզումից ի վեր:

Խաչքարերի վերաբերմամբ հարկ է նաև նշել, որ ագուցելիս հեռացվել են նրանց ստորին ելուստները, որոշ խաչքարեր տուժել են նաև վերին կամ ստորին, մի քանիսը՝ նաև կողային հատվածներից: Մեկ խոսքով՝ ակնհայտ է, որ եկեղեցին նորոգելիս առանձին կարևորություն չի տրվել խաչքարերի գեղարվեստական նշանակությանը: Դրանք գործածվել են որպես հարմար և պատրաստի շինանյութ:

Մրենի Կաթողիկեն իր չափերով Անիի Մայր տաճարից հետո համարվում է ողջ Արևմտյան Շիրակի առավել մեծաղիր շինությունը: Այս առթիվ ճարտ. Հ. Մարզպանյանը նշել է. «Յատակագիծը 20,00 x 29,30 մ, այսինքն մօտավորապէս 586 մ քառակուսի ուղղանկիւն քառանկիւն գետնի վրայ կը հանգչի ինչ որ Ախուրեան գետի աջ ափին վրայ գտնուող եւ ամենամեծը եղող Անիի Մայր տաճարէն վերջ երկրորդ կուգայ, իսկ իր բարձրութեամբ կը կարծեմ որ առաջինն է»[59]:

Պատմությունը մեզ չի ավանդել եկեղեցու ճարտարապետի անունը, սակայն Ա. Քալանթարի քննախույզ աչքն այստեղ նկատել է մի տառ, որի կրկնօրինակը եղել է նաև Ագարակի եկեղեցում: Այն թերևս կարելի է վարպետի նշանագիր կամ պարզապես անվան առաջին տառ համարել. «Պատի քարերի վրա տեսա Յ տառը, այս նույն Յ-ն, որ կա Ագարակի խաչաձև եկեղեցու վրա. միտքս այն է, թե մի վարպետ է աշխատել այս երկու հուշարձանի վրա, մի մարդ է այս բացառիկ գլուխգործոցների ստեղծողը»[60]:

Մրենի Կաթողիկեն հետազոտած բոլոր հեղինակներն առանձնահատուկ նկատել են կառույցի հանճարեղ պարզությունը: Ճարտ. Հ. Մարզպանյանը նշել է. «...տաճարին անծանօթ ճարտարապետը կարողացած է իրագործել՝ «Պարզով ամենադժուարինը»[61]:

Բնութագրելով եկեղեցու տեխնիկական վիճակը՝ հարկ է նշել, որ դեռևս 1900-ական թթ. վերջերին կացությունն ընդհանուր առմամբ անվտանգ էր. «...գրեթե մինչև մեր օրերը կանգուն է աննշան վնասվածքներով: Եթե հնագիտական լուրջ հոգատարություն լինի, հեշտությամբ դարմանելի վնասվածքներ, և այն ժամանակ այս շենքը դեռ մի քանի դար ևս կապրի»[62]: Վիճակը փոքր-ինչ մտահոգիչ է նկարագրել Ա. Քալանթարը 1920 թ. «Տաճարը կանգուն է ամբողջովին, գմբեթով հանդերձ, բայց շատ վտանգավոր ճեղքվածքներ ունի. օրինակ, արևմտյան պատի հյուսիսային անկյունը՝ վերից մինչև վար, նույն կողմի հարավային թևը՝ միջին նեֆից սկսած թեք գծով պատուհանով՝ մինչև գետին, ուր այդ ներքին անկյունը քանդված է բոլորովին: Ուրիշ ճեղքվածքներ էլ կան, գմբեթը ծակված է՝ խաչի տեղը, պատերի մեջ ծակվածներ կան, որոնք փակված են հասարակ քարերով, առանց շաղախի (արևմտյան և հյուսիսային պատերի մեջ): Ծածկը վնասվածքներ ունի: Անհրաժեշտ է, առաջին հերթին, այդ տեղերը կարգի բերել, այլապես ջրի մտնելով պատերի մեջ քանդումը կարող է արագ քայլերով առաջ գնալ և արագորեն խախտել այս եզակի հուշարձանը»[63]:

Ինչ վերաբերում է 1920 թ.-ից ի վեր ստեղծված կացությանը, ապա հստակ է, որ վերջին 90 տարիներին մարդկային չարամտությունն ավելի է քայքայել հնամենի կառույցը, քան անցած 1300 տարիները:

Մրենի Կաթողիկեն ճարտարապետական հանճարի արգասիք է, ուստի «...որքան ատեն, որ կանգուն մնայ՝ այդ ամայութեան մէջ պիտի փնտրէ զինքը գնահատող գեղարուեստասէրներ»[64]:

Վիմագրեր. Մրենի Կաթողիկե եկեղեցու արձանագրությունների հավաքման, վերծանման և հրատարակման գործում ևս հիմնարար ավանդ ունի հայր Ներսես Սարգսյանը[65]: Նրա՝ բարեբախտաբար բավականաչափ ամբողջական վերծանություններից հետագայում օգտվել են բազմաթիվ ուսումնասիրողներ, ովքեր հարկ եղած դեպքում հենց այդ ընթերցումներն են վերահրատարակել:

Սրանով հանդերձ՝ վաղուց հասունացել էր եկեղեցու արձանագրությունները գիտության այդ ճյուղի ժամանակակից պահանջների համեմատ հրատարակելու կարիքը: 2000 թ. ձեռք բերելով նպատակին ծառայող հարկավոր լուսանկարները՝ Կաթողիկե եկեղեցուն նվիրված սույն բաժինը եզրա-



Կաթողիկե եկեղեցու արևմտյան ճակատին առկա վիմագրերի տեղադրության սխեմա

59 **Մարզպանեան Յ.**, նշվ. աշխ., էջ 120:
60 **Քալանթար Ա.**, նշվ. աշխ., էջ 192:
61 **Մարզպանեան Յ.**, նշվ. աշխ., էջ 123:
62 **Թորամանյան Թ.**, նշվ. աշխ., էջ 295:
63 **Քալանթար Ա.**, նշվ. աշխ., էջ 191:
64 **Մարզպանեան Յ.**, նշվ. աշխ., էջ 130:
65 **Սարգսյան Ն.**, նշվ. աշխ., էջ 196-200:



փակում ենք՝ ներկայացնելով եկեղեցու արևմտյան և հարավային որմերի արձանագրությունները:

Ա. Արևմտյան ճակատի վերնամասում, 3 տող.

[Ամուոյ քսան եւ ինն]որդի (կամ) [երեսներ]որդի) Հերակղի բարեյաղթող թագաւորի յիշխանութե[ան Դաւթի ա]մենագով պատրկի կուրապաղատի եւ սպարա|[պետի Հայ]ոց եւ ասրուց եւ յեպիսկոպոսութեանն սրբա[սիրի տեառն Թե]ովփիղոսի եւ ի տանուտերութեան Ներսե|[հի Շիրա]կայ եւ Արշարունեաց տեառն շինեցաւ սուրբ եկեղեց[իս ի բարեխաւս]ութիւն Կամսարականաց եւ Մրենոյ եւ ամենայն երկրի:

Հրատ. **Ալիշան Ղ.**, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 114; **Орбели И.**, Багаванская надпись 639 года и другие армянские ктиторские хадписи VII века, “Христианский Восток”, СПБ, 1913, т. 2, выпуск 1, էջ 138; **Орбели И.,** Избранные труды, Ереван, 1963, էջ 401; **Մանուչարյան Ա.**, Մրենի և Թալին տաճարների շինարարական արձանագրությունները, «ՊԲՀ», 1966, № 1, էջ 247; **Մնացականյան Ս.**, Ե՞րբ է կառուցվել Մրենի տաճարը, «ՊԲՀ», 1969, № 3, էջ 161:

Ծանոթ. 639-640 թթ. շինարարական այս վիմագիրն առաջինը նկատել, սակայն բարձրության պատճառով չի կարողացել ընդօրինակել հայր Ն. Սարգսյանը. «Ի նոյն յարևմտեան կողմն բաց ՝ի վերոյգրելոցդ կայր և այլ միւս ևս արձանագիր խոշորատառ, որ վասն բարձրութեան տեղւոյն մնաց անվերծանելի, իւրում թերևս յիշատակ գոյր հիմնադրի նորա Դաւթի Սահառունւոյ» (**Սարգսյան Ն.**, նշվ. աշխ., էջ 158): Տևական ընդմիջումից հետո վիմագիրն առաջինը հրատարակել է Ղ. Ալիշանը: Ավելի ուշ լուսանկարների և Ն. Մառի՝ 1892 թ. կատարած դաշտային գրառումների հիման վրա վիմագրի վերծանությունը հրատարակել է նաև Հ. Օրբելին: Հիմք ընդունելով Կ. Գանձակեցու վկայությունը՝ «Յաւուրս սորա ի ԿԲ (613) թուականին եղև շինուած կաթողիկէին Մրենոյ», Ա. Մանուչարյանը վիմագրի կորած սկզբնամասն առաջարկել է ընթերցել. «[Յամի երր]որդի Հերակղի...», իսկ Ս. Մնացականյանը՝ «[Ամի երեսներ]որդի Հերակղի...»:

Ներկայացնում ենք Հ. Օրբելու վերծանությունը:

Բ. Արևմտյան ճակատին, 5 տող.

Յանուն ա(ստուծո)յ ի ՆԽԱ (992) թիվականիս ես Դաւիթ Վարդա որդի ետու զիմ այգին զայն | որ ... ի գետեզերն իմ ձեռաց արկել ի սուրբ Կաթողիկէ ի ձեռն աստուածապատիվ | եւ հոգեւոր տեառն Սահակայ եւ պարտիս եմ [ընգեցեալ մինչ ի] միւս {ան}անգամ գալուստն զբար|եկենդանին ուրբաթ աւրն պատարագ[ն յամենայն եկեղե]ցիս յիմ անուն մատուցանե եւ որ ոք ստե կամ յապիշտակել իմ մեղ[ացս եւ իմ ազգի մեղաց] պարտական եղիցի առաջի աստուծոյ եւ | [աստուծոյ յաստուծոյ դատապարտ եղիցի եւ մասն եւ բաժին ընդ խաչահանս կրեցէ | իսկ կատարիչ գրոյս աւրհնեալ եղիցին յաստուծոյ եւ յամենայն սրբոց]:

Հրատ. **Զալալեանց Ս**., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, Տփխիս, 1858, Բ, էջ 47 (զգալի անճշտություններով); **Սարգսեան Ն.**, նշվ. աշխ., էջ 196-197; **Ալիշան Ղ.**, Շիրակ, էջ 138; «Մեղու Հայաստանի», 1881, № 146, էջ 1-2; **Эмин Н., Армянские надписи в Карсе, Ани и в окрестностях последнего, Москва, 1881,** էջ 72-73; **Սրապեան Կ.**, նշվ. աշխ., «ԲՀԱ», 1970, № 2, էջ 105:

Ծանոթ. ներկայացնում ենք Ն. Սարգսյանի վերծանությունը:

Գ. Արևմտյան ճակատին՝ մուտքից հարավ, 7 տող.

Եւ ես Սոփի դուստր մեծին Աշոտոյ Շ[ահան]շ|ահի Հ[այո]ց եւ Վրաց թագուհի տվեալ եմ ե[ւ] |



Կաթողիկե եկեղեցու արևմտյան ճակատի 992 թ. արձանագրության (№ Բ) լուսանկարն ու գրչանկարը

Կաթողիկե եկեղեցու արևմտյան ճակատի Ժ-ԺԱ դարերի արձանագրության (№ Գ) լուսանկարն ու գրչանկարը

[հ]աստատեալ զԴաւթի զայգին ի սուրբ կաթ/[ո]ղիկե եւ ի տ(է)ր Սահակ եւ ի նորին աթոռակալս / [զ]որ ինքն ինձ անդարձ եր արարեալ վասն Դավթի / [հո]գոյն եւ վասն իմ եւ վասն Գագկայ Շահան/-[շա]հի արեւշատութեան եւ որ ոք յապըշտակել ջա/-[նայ յա(ստուծո)յ բանեն ...եալ եղիցին իսկ հրամանակատարքն աւրհնեալ եղիցին յաստուծոյ]:

Հրատ. **Սարգսեան Ն.**, ՇՀվ. աշխ., էջ 197; **Ալիշան Ղ.**, Շիրակ, էջ 138; «Մեղու Հայաստանի», 1881, № 146, էջ 1; **Эмин Н.**, ՇՀվ. աշխ., էջ 73: **Սրապեան Կ.**, ՇՀվ. աշխ., «ԲՀԱ», 1970, № 2, էջ 105:

Ծանոթ. ժամանակը որոշվում է Աշոտ Գ Ողորմածի դստեր՝ Սոփիի անվան հիշատակությամբ (Ժ-ԺԱ դդ.): Արձանագրության չպահպանված (2000 թ.) հատվածները լրացրել ենք ըստ Ն. Սարգսյանի հրատարակության:

Դ. Արևմտյան ճակատին՝ մուտքից հյուսիս, 9 տող.

Յանուն ա(ստուծո)յ այս իմ ի հրամանք եմ Գագկա շահիազնշահի / ազատեալ եմ զՄրենոյ զկոռն, որ ի Նախճաւանի էր զմարդո / եւ զեզին ի ձեռն խնդրոյ ա(ստուա)ծապատիւ տ(եառ)ն Սահակ Աշարուն/եաց եպիսկոպոսի որ անմաւռաց խնդրե ի Ք(րիստոս)է թողութիւն լինե/լ մեղաց իմոց արդ աւր ոք ընդիմանա իմա հրամա[գ]նացս կամ / յիմ յորդեաց կամ այլոք եւ իցե պարտական լիցի մեղաց իմոց եւ / իմ ամենայն ազգի եւ սպանման արեանն Ք(րիստոս)ի, իսկ կատարիչ գրո/յս աւրհն(եալ) եղիցի Ք(րիստոս)է սուրբ կաթողիկէ եւ սուրբ Նշանս լիցի կնիք գրոյս / եղաւ առաջնորդ բարոյս հարպ հայոց տանաւտէր:

Հրատ. **Սարգսեան Ն.,** ՇՀվ. աշխ., էջ 197; **Ալիշան Ղ.**, Շիրակ, էջ 138-139; «Մեղու Հայաստանի», 1881, № 146, էջ 1; **Սրապեան Կ.**, ՇՀվ. աշխ., «ԲՀԱ», 1970, № 2, էջ 105 (թերի); **Эмин Н.**, ՇՀվ. աշխ., էջ 73:

Ծանոթ. ժամանակը որոշվում է Գագիկ թագավորի գահակալության տարիներով (989-1020 թթ.):

Ե. Արևմտյան ճակատին՝ մուտքից հարավ, 8 տող.

Վահան քահանա գծող: / Ի ՆՂ (1041) թուականութեանս Հա(յ)ոց, ի հայրապետութեան տ(եառ)ն Պետրոսի եւ Խաչ/կա Հա(յ)ոց կաթողիկոսաց, այս իմ հրամանք եմ Գագկա Շահանշահի որդոյ Ա/շոտո՝ ազատել իմ զՄրենոյ գհարկն գծուծ եւ մրուր, զկապիճքն :ԻԵ: (25) / իջուցի եւ բագինի հացն եւ գդրամն, եթե ոք ընդիմանա հրամանաց իմոց / յիմոց կամ այլ ոք ով իցե պարտական եղիցի սպանման արեանն ի Ք(րիստոս)ի ի ժամ ամենայն / ազգի մեղաց տէր է ի ՅԺԸ ն (318) հայրապետացն ձգովեալ եղիցի ի կենդանի եւ մահու / եղեւ առաջնորդ ...Գրիգոր Հա(յ)ոց տանուտէր:

Հրատ. **Զալալեանց Ս**., ՇՀվ. աշխ., Բ, էջ 47; **Սարգսեան Ն.**, ՇՀվ. աշխ., էջ 197; **Ալիշան Ղ.**, Շիրակ, էջ 139; «Մեղու Հայաստանի», 1881, № 146, էջ 1; **Эмин Н.**, ՇՀվ. աշխ., էջ 74; **Սրապեան Կ.**, ՇՀվ. աշխ., «ԲՀԱ», 1970, № 2, էջ 105 (թերի):



Կաթողիկե եկեղեցու արևմտյան ճակատի Ժ-ԺԱ դարերի արձանագրության (№ Դ) լուսանկարն ու գրչանկարը

Կաթողիկե եկեղեցու արևմտյան ճատատի Ժ-ԺԱ դարերի արձանագրության (№ Ե) լուսանկարն ու գրչանկարը

Ծանոթ. առաջին տողում տառերն ավելի խոշոր են: Ջալալյանցի ընթերցումը կիսատ է, թվականը սխալմամբ՝ ՆՉ (957): Ն. Սարգսյանն ունի մանր տարընթերցումներ: Ի դեպ, արձանագրության մեջ հիշված նվիրատու Աշոտ Դ-ն վախճանված է համարվում 1040 թ., մինչդեռ վիմագիրն ավանդում է, որ տվյալ դեպքում թագավորը որոշ հարկերից Մրենն ազատել է 1041 թ.: Ինչ վերաբերում է «Վահան քահանա գծող»-ին, ապա նրա անվանը հանդիպում ենք նաև Բագարանի 1034 թ. արձանագրության մեջ (**Սարգսեան Ն.**, նշվ. աշխ., էջ 202-203):

Զ Արձանագրությունն. խոշոր տառերով և թերի.

Ի յաքեղական տոհմիս տոմարիս եւ թ(վին) Հայոց ի ՇԺԲ (1063) ամաց շր...:

Հրատ. **Սարգսեան Ն.**, նշվ. աշխ., էջ 198; **Ալիշան Ղ.**, Շիրակ, էջ 139; «Մեղու Հայաստանի», 1881, № 146, էջ 1; **Սրապեան Կ.**, նշվ. աշխ., «ԲՀԱ», 1970, № 2, էջ 105:

Ծանոթ. արձանագրությունը 2000 թ. դրությամբ պահպանված չէր:



Կաթողիկե եկեղեցու հարավային ճակատին առկա վիմագրերի տեղադրության սխեմա





Կաթողիկե եկեղեցու հարավային ճակատի 1251 թ. արձանագրության (№ Է) լուսանկարն ու գրչանկարը

Է. Հարավային ճակատին՝ մեկ ամբողջական քարին, 6 տող.

Թուակ | Չ (1251) | յամս ա(ստուա)ծապատիւ տ(եառ)ն Կոստանդեա Հա(յ)ոց կաթողիկոսի.../ հրամանաւ մեծին Շահանշահի եւ յառաջնորդութ .../ տ(է)ր Գրիգորո, եթե ոք յեպիսկոպոսաց կաշառաք ե.../ առնէ կամ անմուրու կամ առանց ընտրութե(ան) մասն զ(Ու)/դահին առցէ եւ զՍիմոնի կախարդի, ով զգիրս ջնջէ ... / ջնջի ի կենաց գրոյն:

Հրատ. **Սարգսեան Ն.**, նշվ. աշխ., էջ 198; **Ալիշան Ղ.**, Շիրակ, էջ 139; «Մեղու Հայաստանի», 1881, № 146; **Эмин Н.**, նշվ. աշխ., էջ 74:



Կաթողիկե եկեղեցու հարավային ճակատի 1273 թ. արձանագրության (№ Ը) լուսանկարն ու գրչանկարը

Ը. Հարավային ճակատին՝ մեկ ամբողջական քարի վրա, 4 տող.

Թուակ | ՉԻԲ (1273) | ողորմութե(ամ)քն ա(ստուածո)յ ես պարոն Սահմադինս ազատեցի զս(ուր)բ ուխտին [Արջվ]ա ...|ո այգիքն Մրենո եւ Աւշականո ի Խալ :Ա: (1) ի եւ յդդ հարկէ որ բնական ազատ էր ոչ Ամիրի :Ա: (1) | ոչ ում ձեռն չկա ի վերա վ(ա)ս(ն) արեւշատութե(ան) որդեց իմոց քաւութե(ան) մեղաց մե(ղոց) ...| [ազատ մինչ ի ծագումն Ք(րիստոս)ի, արդ թէ ոք ի մերոց կամ յատարաց] ...:

Հրատ. **Սարգսեան Ն.**, նշվ. աշխ., էջ 198; **Ալիշան Ղ.**, Շիրակ, էջ 139; «Մեղու Հայաստանի», 1881, № 146, էջ 1; **Эмин Н.**, նշվ. աշխ., էջ 74:

Ծանոթ. արձանագրության՝ 2000 թ. լուսանկարում չպահպանված հատվածները լրացրել ենք ըստ Ն. Սարգսյանի:

Թ. Հարավային ճակատին՝ երեք շարք քարերի վրա, 11 տող.

Թուակ(անութեանս) | ՉԼԳ (1284) կամաւ ա(ստուածո)յ ամենակալին այս մեր արձանագիր է պարոն Սէնոպ Սա|հմատինս Աւէտեց որդոյս եւ կենակից իմ Ուրտուրիտայ որ յառաջ գն|եցի զՄրենն յիմ հալալ արդեանց եւ հաստատեցաք արձանա{ն}գրով եւ քողաք զ|Մրենոյ տասնական հացին, որ է շարիատն նախ մեզ արեւշատութի(ւն) եւ որդեաց մ|երոց եւ յիշատակ յետ ելից աստի կենացս եւ մեզ մեղաց քողութի(ւն) եւ արձան մնալ մինչ ի գալուստն Քրիստոսի արդ էթէ ոք ի մերոց կամ յատարաց զհաստատ արձանս | մեր խափանել ջանայ, պարտական լիցի սպանման արեան որդոյ ա(ստուածո)յ եւ դատաւոր նորայ սա|տանա լիցի եւ գյաւիտեանից անեծս{ս}ն ժառանկեսցէ զՈւռհայ եւ զԿաենին

Կաթողիկե եկեղեցու հարավային ճակատի 1284 թ. արձանագրության (№ Թ) լուսանկարը ու գրչանկարը

եւ հաստատ | պահաւղքն աւրհնին յա(ստուածո)յ: Կիկլիչանայ Ամիրութ(եամ)քս գրեցաւ:

Հրատ. **Սարգսեան Ն.**, նշվ. աշխ., էջ 198-199; **Ալիշան Ղ.**, Շիրակ, էջ 139-140; «Մեղու Հայաստանի», 1881, № 146, էջ 1; **Эмин Н.**, նշվ. աշխ., էջ 75:

Ծանոթ. թվականը սխալմամբ՝ ՉԻԳ (1274):

Ժ. Հարավային ճակատին՝ երեք շարք քարերին, 8 տող.

Թ(վին) ՉԼԷ (1288) յանուն{ն} ա(ստուածո)յ եւ միջնորդութ(եամ)ք ամենայն երկնա(յ)ին եւ երկրա(յ)ին զաւ|րութե(ան). Ես պարոն Սէնոպ Սահմադինս եւ ամուսին իմո Տուրտա վ(աս)ն փրկութե(ան) | մեղաց մեր եւ վ(աս)ն յերկար կենդանութե(ան) զաւակաց մերոց եւ վ(աս)ն շինո(ւ)թե(ան) համ|ար Մրէնո հացին շարիաւտն քողել էաք եւ հայմայլ քողաք զեգեցն | գինո եւ խաղողի խալէն, որ այլ ոչ ի մերոց եւ ոչ յատարաց ոչ ով չխառնէ | ով հակառակի եւ զմեր յիշատակս խափանէ, նզովի յաստուծոյ եւ :ՅԺԸ: (318) հա(յ)րապ|ետացն եւ մասն եւ բաժին նորա ընդ Ուդայի եւ ընդ Կաէինի եւ ընդ սատանայի ԵԸ (?):

Հրատ. **Սարգսեան Ն.**, նշվ. աշխ., էջ 199; **Ալիշան Ղ.**, Շիրակ, էջ 140; «Մեղու Հայաստանի», 1881, № 146, էջ 1; **Эмин Н.**, նշվ. աշխ., էջ 75:

ԺԱ. Հարավային ճակատին՝ երկու շարք քարերի վրա, 4 տող.

Թ(վին) ՉԽԴ (1295) | կամաւ ա(ստուածո)յ ես Դաւիդ միաբանեցա ս(ուր)բ կաթողիկեիս եւ արար արդիւնք տ(է)ր Յով եւ այլ սպաս|աւորք եկեղեցոյս փոխարէն հաստուցին մեզ ի տարին :Բ: (2) ժամ ի տաւնի Դաւթի եւ Յ|ակոբայ :Ա: (1) ինձ առնեն Դաւթի եւ :Ա: (1) ամուսնոյ իմոյ Էլխաթունին, կատարողք աւրհնին աստուածոյ:

Հրատ. **Սարգսեան Ն.**, նշվ. աշխ., էջ 199; **Ալիշան Ղ.**, Շիրակ, էջ 140; **Эмин Н.**, նշվ. աշխ., էջ 76:

Ծանոթ. Ն. Սարգսյանի մոտ առկա են մանր տարընթերցումներ, որոնք առկա են նաև վերահրատարակություններում:

ԺԲ. Հարավային պատին՝ արևմտյան անկյանը մոտ և ցածր մասում, 5 տողով փորագրված է եղել.

Կամաւ ա(ստուածո)յ ի պարոնութ(եամ)քն Սարգսի և Էվան խաթունին | եւան Ակոբայ և [ի] հայրապետութե(ան) ի տ(է)ր Վ(ար)դ(անին) ես Իւանիկս իմ ամիրու|թե(ան)ս և Աւտաշին ձ(եռն)ադրութե(ան) զայս արձան հաստատ|եցաք ու զձիհանն եկեղեցոյս ընձայ տվ|աք մեր հոգոյս համար...:

Հրատ. **Марръ Н.**, Новые материалы по армянской эпиграфике, СПБ, 1893, էջ 88-89:

ԺԳ. Հարավային պատին՝ արևմտյան անկյանը մոտ և ցածր մասում.

...(ա) և այլ աթոռ(ակալ) այն մին | (ն) եւ հոգոյս յիշատակի | ... ակ են մինչ ի Ք(րիստո)ս եւ որ ոք ...(մ)եղաց և իմ ազգի մեղաց...:

Հրատ. **Марръ Н.**, նշվ. աշխ., էջ 88:

Կաթողիկե եկեղեցու հարավային ճակատի 1288 թ. արձանագրության (№ Ժ) լուսանկարն ու գրչանկարը

Կաթողիկե եկեղեցու հարավային ճակատի 1295 թ. արձանագրության (№ ԺԱ) լուսանկարն ու գրչանկարը

ԺԴ. Հյուսիսային պատին 3 տողով փորագրված է եղել.

Զաւուրդ յիշեցեք Մրենոյ ... զերեց:

Հրատ. **Մրապեան Կ.**, ՇՀվ. աշխ., «ԲՀԱ», 1970, № 2, էջ 105:

ԺԵ. ԺԳ դարում իրականացված նորոգության ժամանակ եկեղեցու հարավային որմին արտաքուստ ագուցված խաչքարերից մեկի ստորին մասում.

Տ(է)ր աւ/ղորմեայ:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ժամանակը՝ Ժ-ԺԱ դդ.:

Գերեզմանոց. ներկայումս իսպառ անհետացված հնավայրի մասին դեռևս 1878 թ. նշվել է. «Քաղաքիս գերեզմանաքարեր նույնպես և ուրիշ նշանավոր շինվածոց քարեր տաճիկներ տանելով փոշտ շինած են, միայն մի մահարձան հանդիպեցավ մեզ, որո վերա եպիսկոպոսական հանդերձով կղերական մի քանդակված էր»[66]:

Ինչպես երևում է, գլխավոր գերեզմանոցը գտնվել է Կաթողիկե եկեղեցու հարևանությամբ. «Մօտ առ եկեղեցւոյն բազում շիրիմք են վաղեմիք. ոմանք բարձրակերտք արկղածևք, այլք ըստ սովորական ձևոյ. են ի նոսա և քանդակագործ զարդք անշուք»[67]: Սակայն գերեզմանական հուշարձաններ Մրենում եղել են ոչ միայն գերեզմանոցում, այլև քաղաքատեղիի զանազան մասերում. «Խաչքարք բազում են ի Մրեն, ոչ ի միում վայրի, այլ ցրիւ. ոմանք հոյակապք և բարձր որմագործ ստուար պատուանդանաւ, այլք մարդաչափ բարձրութեամբ...»[68], այգիների մեջ, որտեղ գերակշռում էին տապանաքարերը. «Այգիներից շատերի մէջ ես պատահեցայ 2-6 հատ մանր և խոշոր տապանաքարերի և մի քանի տեղ էլ գինու հնձանների»[69]:

Խաչքար. պատվանդանին եղել է.

Ով ս(ուր)բ խաչ փրկական եւ ներկեալ արեամբ որդւոյն ա(ստուծո)յ ի քեզ ապաւինեցաք ծառայքս խաչելոյն Ք(րիստոս)ի. ես Մարտիրոս եւ ամուսին իմ Վարդուտս եւ հարազատ որդիք մեր Փարսամն Հմաէ...Ս(ար)գ(ի)ս ք(ա)հ(անա) եւ քոյր մեր Նճիս կանկնեցաք զխաչս բարեխաւս մեզ եւ ծնողաց մերոց, զաւակաց մերոց, արդ աղաչեմք:

Հրատ. **Սարգսեան Ն.**, ՇՀվ. աշխ., էջ 199; **Ալիշան Ղ.**, Շիրակ, էջ 141; «Մեղու Հայաստանի», 1881, № 146, էջ 1; **Էմին Հ.**, ՇՀվ. աշխ., էջ 76:

Ծանոթ. Ն. Սարգսյանը նշել է. «Փակագիր գրեալ թուի Հմաէկ և այլ ևս անուն մի եղծ»:

Մատուռներ. տեղագիր հեղինակները Մրենում արձանագրել են երկու մատուռ. «Բաց ի խաչքարիցն են և երկու փոքր մատրունք...»[70]: Նրանցից մեկը գտնվել է Կաթողիկե եկեղեցու հարավային («Եկեղեցւոյ հարաւակողմ կարմիր սրբատաշ քարերով շինուած մի փոքրիկ կիսափուլ մատուռ կայ վերան խաչեր քանդակուած և դրան առջև մի պատուանդանի մահարձան...»)[71], մյուսը՝ արևել-

66 **Սրապեան Կ.**, ՇՀվ. աշխ., «ԲՀԱ», 1970, № 2, էջ 106: Տե՛ս նաև ԳԱԹ, Գ. Սրվանձտյան ֆոնդ, բ. I, գ. 17, թ. 9-10:

67 **Սարգսյան Ն.**, ՇՀվ. աշխ., էջ 200:

68 Նշվ. աշխ., էջ 199:

69 **Յովհաննէսեանց Կ.**, Մրէն, «Մեղու Հայաստանի», 1881, № 146, 29 յուլիսի, էջ 2:

70 **Սարգսեան Ն.**, ՇՀվ. աշխ., էջ 199:

71 ԳԱԹ, Գ. Սրվանձտյան ֆոնդ, բ. I, գ. 17, թ. 10: Տե՛ս նաև **Սրապեան Կ.**, ՇՀվ. աշխ., «ԲՀԱ», 1970, № 2, էջ 106:



Մրեն. որմնափակ խաչքարեր քաղաքատեղիի տարածքում (լուս.՝ 1900-ական թթ.): Միտումնավոր անհետացվել է 1920-ական թթ.-ից հետո:

յան կողմում («Եկեղեցւոյ արևելակողմ կարմիր քարերով շինուած երեք դռնեայ մի փոքրիկ մատուռ ևս կար դեռ բոլորովին կանգուն, որոյ կամարակապ դրան կամարին մէջ փակագրերով արձանագրութիւն մը կը գտնուէր...»)[72]:

Արևելակողմյան մատուռի մուտքին եղել է.

Թ(վին) ՉԻՋ (1277) ի հայրապետութեան եւ թագաւորութեան Հայոց տեառն Յակոբա եւ Լեւոնի եւ ի պարոնութեան Սահմատինի ՚ներակառուցեալս զայս խորան յանունաղրութիւն Յ(իսուս)ի փրկչին մերո, որ է պատճառ աղաւթելոյ ի սմա զիս Մխ(իթար) վարդապետս եւ որք աւգնեցին, յիշեցէք:

Հրատ. **Սարգսեան Ն.**, նշվ. աշխ., էջ 200; **Ալիշան Ղ.**, Շիրակ, էջ 140; **Էմին Հ.**, նշվ. աշխ., էջ 76; **Սրապեան Կ.**, նշվ. աշխ., «ԲՀԱ», 1970, № 2, էջ 106:

Ծանոթ. Ս. Կյուրեղյանի վերծանությունը չափազանց սխալաշատ է:

Ապարանք «Սահմադինի» կամ «Վարդան քյոխվի դարպաս». ԺԹ դարում Մրենի այցելուները քաղաքատեղիի տարածքում արձանագրել են նաև ճարտարապետական աչքի ընկնող այլ կառույցների մնացորդներ, որոնց թվում հիշվում է իշխան Սահմադինի ապարանքը. «...զի դուռն որ ցարդ կանգուն կայ վսեմ է յոյժ և գեղեցկաքանդակ շուրջանակի: Ներքին կողմն նորա և երկուստեք որմունքն քայքայեալ իսպառ, հանդիպակաց որմն նեթ կիսափուլ ի տեղւոջն կայ, յորմէ չէ մարթ գուշակել ինչ. և տեղւոյն տարածութիւն ոչ մեծ ինչ: Ի

Մրեն. Կաթողիկե եկեղեցու արևելյան կողմում գտնված մատուռի (1277 թ.) տեսքը հարավ-արևմուտքից (լուս.՝ Երմակովի, 1890-ական թթ.)

վերայ դրանն արձանագիր կայր, որ և այն մնաց անվերծանելի վասն տեղւոյն բարձրութեան»[73]:

72 Նույն տեղում:

73 **Սարգսեան Ն.**, նշվ. աշխ., էջ 200:

Կ. Սրապյանն էլ հավելել է. «Նոյնպէս հարաւակողմ ուրիշ տեղ մը մի մեծ պալատի աւերակներ կը գտնուէին, որոյ արևելեան դուռ զարմանալի գեղեցկութեամբ բարձր և հոյակապ շինութիւն էր կարմիր



Մրեճ. Կաթողիկե եկեղեցու արևելյան կողմում գտնված մատուռի (1277 թ.) արևմտյան ճակատից բացված մուտքի արձանագրության գրչանկարը

քարերով, դրան վերայ՝ խոշոր յախճապակիներով ևս զարդարուած էր, այս դուռն չորս տող ճակատագիր ունէր, զոր չկրցանք կարդալ թէ բարձրութեան և թէ ժամանակի սղութեան պատճառաւ»[74]:

Ուշագրավ է նաև Կ. Օհանջանյանցի վկայությունը, քանի որ նա ավանդել է ապարանքին տրված նաև ժողովրդական անվանումը. «...հարաւային բնակարանների կենդրոնում քարի և հողի շեղջերի մէջ կանգուն կան երկու կտոր ուրիշ շինութեանց բեկորներ, որոնք հաստատուած են կարմիր քարերով, տեղ-տեղ զմայլեցուցիչ նկարներով և քանդակներով զարդարուած: Դռոցանից մէկը՝ որ դռան նմանութիւն ունի, «Վարդան քեօխվի դարպաս» է կոչվում, իսկ երկրորդը՝ հաւանական է դիտանոց կամ բուրգի մնացորդ կարծել»[75]:

Ապարանքի զարդաքանդակները գրավել են նաև Հ. Օրբելու ուշադրությունը[76]:

Ներկայումս այս հուշարձանն էլ է անհետացված, ուստի մեծ բարեբախտություն է, որ կառույցի շինարարական արձանագրությունը, որը չէին կարողացել ընթերցել Ն. Սարգսյանն ու Կ. Սրապյանը, այնուամենայնիվ, ժամանակին արժանացել է մեկ այլ երախտավորի՝ Ն. Մառի ուշադրությանը, ում հաջողվել է ամբողջությամբ վերծանել այն.

Սահմադինի ապարանքի մուտքի վերնամասում, 4 տող.

Թվ ՉԺ (1261) ի տիեզերակալութի(ւն) Հուլաւու ղանի ես Սահմադին որդի [Աւետեաց գ]նեցի զթագաւորանիս[տ] տեղի[ս] զՄրեճ ի յԱրտաշրէ որդո Շահնշահի հալալ ընչ[ից իմ]ոց ի վայելումն ինձ և որդ|ոց իմոց, ա(ստուա)ծ շնահաւոր ար[ա]սցէ յաւիտեանս ժամանակաց: [Ի թվ] ՉԻԵ (1276) յաշխարհակալութե(ան) Ապաղանին ես Սամտին, որ պարոնին ամարանոց ու դարապաս չկայր, զաս այգիս և զդրա|խտս, որ կոչի Արքայութի(ւն), գնեցի՝ զամէն մէկ յիւր տիրոչէն. և յիմ մտաց դուս՝ առանց (՞) վարդպետի ձնեցի ու հիմն ձգեցի դարապասիս ու դրախ[տ]իս. ի Ժ (10) տարին կատարեցի. ա(ստուա)ծ | շնահաւոր արասցէ պարոն սահմատինին որդից ի յորդիք. ու խարճ, որ եղաւ դարապասիս :Խ:Ռ: (4000) դուկատ դահեկան:

Հրատ. **Марръ Н.**, Новые материалы по армянской эпиграфике, СПБ, 1893, էջ 82-83; **Мapp Н.**, Ани, Ереван, 1939, стр. 79; **Քալանթար Ա.**, նշվ. աշխ., էջ 192 (ունի միայն սկզբնամասը); **Ժամկոչյան Հ. Գ.**, Անի քաղաքի 13-րդ դարի երկու արձանագրության մասին, «Տեղեկագիր», 1955, № 47, էջ 102:

Ծանոթ. Ա. Քալանթարը նշել է, որ «Սահմատինի պալատի դուռն է մնացել միայն յուր ճակատով: Վերին եզերքում 4 տող, բազմաթիվ ծղպատներով և հաճախ տառերի մեջ տառեր ու արձանագրություն է խոշոր տառերով ամբողջ լայնությամբ»:

Ապարանք «Արքունի». քաղաքատեղիի՝ մեզ չհասած աշխարհիկ կառույցներից է եղել նաև պայմանականորեն Արքունի կոչված ապարանքը. «Մի երևելի հնութեանց Մրենոյ է և աւերակ արքունիքն... և յայդ անուն զնա աւանդեն, զի և ոչ այլում ձևոյ նմանե ցուցանել կարեմ. ոչ իբրու աթոռանիստ արքայական, այլ զբօսանաց վայր. և զայդ ոչ ի ստոյգ ինչ յիշատակարանաց երաշխաւորեմ, այլ այնու ևեթ զի այգեստան էր տեղին և շինուածդ փառահեղ, նմին իրի և թագաւորաց արժանաւոր...»[77]:

Ապարանք «Վարաքեօխվի». ևս մեկ ապարանքի եզակի նկարագրություն է փոխանցել Կ. Օհանջանյանցը. «Եկեղեցուց մի քանի հարիւրաւոր քայլափոխ հեռաւորութեամբ կանգնած կայ մի մեծ շինութեան հետք կամ մնացորդ. դա իւր զմայլեցուցիչ նկարներով, մանր, խոշոր և բազմատեսակ քանդակներով գրաւում է այցելուի բոլոր ուշադրութիւնը...: Այդ կիսաւեր որմը՝ որ հաստատուած է կարմիր քարերով, շինութեան արևմտեան պատն է. բարձրացած է մի քանի կարգ աստիճանների վերայ. արտաքին երեսը ամբողջապէս կազմուած է խիտ քանդակներից, երեք քառակուսի խորշերի վերայով անցնում են երկու կարգ ծաղկանկար գառնիզներ, որոց վերայ և դրուած են թւով վեց հատ խաչարձանները. դռոցանից աջակողմեանը գրեթէ 2 1/2 արշ. բարձրու-

74 ԳԱԹ, Գ. Սրվանձտյան ֆոնդ, բ. I, գ. 17, թ. 10: Տե՛ս նաև **Սրապեան Կ.**, նշվ. աշխ., «ՔՀԱ», 1970, № 2, էջ 106:

75 **Յովհաննէսեանց Կ.**, Մրէճ, «Մեղու Հայաստանի», 1881, № 146, 29 յուլիսի, էջ 2:

76 **Орбели И.**, Колокол с анийскими орнаментованными мотивами XII-XIII века, Избранные труды, Ереван, 1963, стр. 184.

77 **Սարգսեան Ն.**, նշվ. աշխ., էջ 200:

«Սահմադինի» կամ «Վարդան քյոխվի դարպաս» ապարանքը (լուս.՝ 1900-ական թթ.)

թիւն ունի և գտանվում է քանդակագործ շրջանակի մէջ: Խաչի պատուանդանը ներկայացնում է մի ուրիշ քառաթև խաչ: Այս քնարաձև խաչարձանի բարձրը միևնոյն քարի ճակատին կարգով շարուած կան ուրիշ 5 հատ խաչեր: Սորա մօտ գտանվում է երկրորդ խաչարձանը միևնոյն բարձրութեամբ, ջոկվում է առաջինից այն զանազանութեամբ միայն, որ այստեղ խաչը քնարաձև չէ և նորա բոլորակ պատուանդանը կազմուած է մի խումբ ամենամանր խաչարձաններից: Սորան կից են միւս 4 խաչերը, որոնք յար և նման են միմեանց, միաչափ հաւասար մեծութեամբ և միատեսակ քանդակներով: Դռոցանից 2-ը դրուած են ներքի և 2-ն էլ վերին կողմերում, առանց կլորակ պատուանդանի, քառակուսի դիրքով քանդակագործ շրջանակների մէջ զետեղուած են ծաղկանկար և դալարուն, կիսաբոլոր ու քառակուսի մանր քանդակներով: Ներքուստ որմը շարուած է կարմիր կոփածոյ քարերով, հարթ և հաւասար դրութեամբ: Տեղագծին նայելով՝ սա մի բաւականի մեծ բնակարան կամ թերևս եկեղեցական մի նշանաւոր շինութիւն է եղել մի յարկից բաղկացած: Այս մնացորդի նոր և անաղարտ գրութիւնից կարելի է եզրակացնել, որ բնութիւնը իսպառ չէ մասնակցել դորա կործանմանը, այլ անգութ մարդիկների կործանիչ ձեռքերը բնաջինջ են արել դորան: Այս աւերակին շրջակայ գիւղերի թէ՛ հայ և թէ՛ մահմեդական բնակիչները աւանդութեանը հետևելով՝ «Ղարաքեօխվի» պալատ են անուանում, ասելով, որ իբրև սկզբում այդտեղ բնակուելիս է եղել «Ղարա» անունով տեղական գիւղ-աւագը»[78]:

Վանական կալվածքներ Մրենում. ինչպես երևում է նվիրատվական արձանագրություններից, Մրենի ընդարձակ այգիներից, որոնց թիվը հասել է մինչև 1200-ի[79], սեփական մասնաբաժիններ են ունեցել Արարատյան տարածաշրջանի զանազան վանքերը: Դրանցից էր, օրինակ, Մարմաշենը, որին 1029 թ. նվիրաբերվել են «Մրենի այգիք»[80], Անիի Տիգրան Հոնենցի վանքը, որին 1215 թ. նվիրված կալվածքների թվում հիշվում է նաև «...այգի Ա ի Մրեն...»[81], Խծկոնքի վանքը, որին 1240 թ. ընծայվել է Մրենի Աղտոտ կոչված այգին[82] և այլն: Ի դեպ, Բագարանի Մայր եկեղեցուն էլ 1034 թ. նվիրաբերվել է Մրենում գտնվող ջրաղացներից մեկը. «...ջաղաց մի Մրենի ետու ի սբ կաթողիկէս...»[83]:

Ամփոփում. Մրեն քաղաքատեղիի հուշարձաններին և հատկապես նրա Կաթողիկե եկեղեցուն նվիրված սույն հակիրճ ուսումնասիրության հրապարակումը նախ և առաջ SOS-ահազանգ է՝ հասցեագրված միջազգային պատկան մարմիններին և առաջին հերթին UNESCO-ին՝ կորստյան դատապարտված ճարտարապետական գոհարի պահպանության, թերևս արդեն փրկության խնդրին հրատապ ուշադրություն հրավիրելու ակնկալությամբ: Քաղաքատեղիի հարևանությամբ տեղակայված թուրքական բանակի սահմանապահ ուժերի դիտակետ-զորանոցի շնորհիվ արդեն տասնամյակներ ճարտարապետական հրաշալիքին մոտենալու արտոնություն ունեն միայն մերձակա գյուղերի գանձախույզ բնակիչները, այլ ոչ երբեք ճարտարապետներն ու մշակութաբանները կամ պարզապես զբոսաշրջիկները:

Կոչ ենք անում հնարավոր և անհնարին բոլոր միջոցներն ուղղել կանխելու գրեթե 1400-ամյա հուշարձանի հովանավորված շարունակական քայքայումը:

Հ.Գ. մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում խիզախ հոգևորական Մեսրուի եպիսկոպոս Չուլջյանին 2011 թ. կատարած լուսանկարները մեզ տրամադրելու համար:

---

78 **Յովհաննէսեանց Կ.**, Մրէն, «Մեղու Հայաստանի», 1881, № 146, 29 յուլիսի, էջ 2:

79 Մասնավորապես «Կաթողիկէ եկեղեցու արևմտեան և հիւսիսային կողմերով, ըստ մեծի մասին դրուած են այգիները, որոնք կարելի է թւով աւելի քան 1,200 համարել: Բոլորն էլ պատած են ցածրիկ, բայց քարեայ ամուր շրջապատներով, այգիների մէջ տակաւին գտանվում են աննշան քանակութեամբ վայրենացած պտղատու ծառեր, իսկ քարախիտ ձորակում բուսնում է բաւականի համեղ խաղող» («Մեղու Հայաստանի», նույն տեղում):

80 Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, աշխատասիրութեամբ Յովհաննու եպիսկոպոսի Շահխաթունեանց Շահրիարցւոյ միաբանի սրբոյ Էջմիածնի, հ. երկրորդ, Ս. Էջմիածին, 1842, էջ 272:

81 Դիվան Հայ վիմագրության, պրակ 1, Երևան, 1966, էջ 63:

82 **Մարգիսեան Ն.**, նշվ. աշխ., էջ 211:

83 Նշվ. աշխ., էջ 202-203:

ՀՁՈՒ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2012 թ. փետրվարին
ՀՀ սփյուռքի և մշակույթի
նախարարությունների հովանավորությամբ
լույս է տեսել
«Անի-1050»
եռալեզու մեծադիր հատորը:



2012 թ. փետրվարին
ՀՀ մշակույթի նախարարության
հովանավորությամբ
լույս է տեսել
«Տպարանները Հայոց Հայրենիքում»
քարտեզը (100 x 70 սմ)՝
նվիրված Հայ տպագիր գրքի 500-ամյակին:

2012 թ. մարտին լույս է տեսել նաև
«ՀՃՈՒ. գիտական ուսումնասիրություններ»
շարքի ԺԵ հատորը՝
դր. Արմեն Հախնազարյանի՝
«Արտազի երեք վանքերը»
աշխատությունը:



ՀԾՈՒ ՆՈՐ ՆԱԽԱԳԾԵՐ

2015 թ. Մեծ եղեռնի ոգեկոչման 100 տարին բոլորելու կապակցությամբ հիմնադրամը նախատեսում է ամբողջացնել տասնամյակների ընթացքում իրականացված տարաբնույթ ուսումնասիրական աշխատանքները և Արևմտյան Հայաստանի շուրջ 70 գավառները ներկայացնել 36 հատորներով: Մատենաշար, որ կխորհրդանշի մեր հարգանքի տուրքն ու խոնարհումն անմեղ զոհերի հիշատակին:

Ընթացքի մեջ են նաև Արցախի բնակավայրերի պատմությունը և նյութական մշակույթի հուշարձանները ներկայացնող բազմահատորյակի նախահրատարակչական աշխատանքները:

ԱՋԴ

Ընդառաջ պատմական այն իրողությանը, որ 2013 թ. լրանում է մեծահռչակ Տեղերի վանքի կառուցման 800-ամյակը (1213-2013), հիմնադրամը որոշել է «Վարձք» հանդեսի 2013 թ. համարներից մեկն ամբողջությամբ՝ որպես բացառիկ համար, նվիրել ցարդ հանիրավի անբավարար ուսումնասիրված նշյալ վանական համալիրին:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Խորին երախտագիտություն ենք հայտնում մեր աշխատանքներին մշտապես աջակից լոսանջելեսաբնակ պ. **Արթուր Սերեդյանին** (Հարություն Սարհադյան, վանեցի քաղաքական, հասարակական, մշակութային և կրթական գործիչ Սիրաք Սարհադյանի կրտսեր որդին)՝ մեր հիմնադրամին IPAD2 4G նվիրելու համար:

ԿՈՐՈՒՍՏ

Ցավով հայտնում ենք, որ ծննդավայր Ախալցխայում 2012 թ. փետրվարի 27-ին 92 տարեկանում վախճանվել է մեր թանկագին հայրենապաշտ Հայ, ավագ ընկեր, վարպետ **ՍԵՊՈՒՀ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԸ**



Մրեն քաղաքատեղիի հուշարձաններին և հատկապես նրա Կաթողիկե եկեղեցուն նվիրված սույն հակիրճ ուսումնասիրության հրապարակումը նախ և առաջ SOS-ահազանգ է՝ հասցեագրված միջազգային պատկան մարմիններին և առաջին հերթին UNESCO-ին՝ կորստյան դատապարտված ճարտարապետական գոհարի պահպանության, թերևս արդեն փրկության խնդրին հրատապ ուշադրություն հրավիրելու ակնկալությամբ: Քաղաքատեղիի հարևանությամբ տեղակայված թուրքական բանակի սահմանապահ ուժերի դիտակետ-զորանոցի շնորհիվ արդեն տասնամյակներ ճարտարապետական հրաշալիքին մոտենալու արտոնություն ունեն միայն մերձակա գյուղերի գանձախույզ բնակիչները, այլ ոչ երբեք ճարտարապետներն ու մշակութաբանները կամ պարզապես զբոսաշրջիկները:

ՆԱԽՆԱՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԵՎ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ
ՅՈՒՆԱՆԱՎՈՐ
ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ
ՀԻՄՆԱԴՐԱՄ
RESEARCH ON
ARMENIAN
ARCHITECTURE

ԵՐԵՎԱՆ - YEREVAN
2012